

1546

83  
4-57

2011

2003

83-3

Հ-57

ԵՐԵՍ ԳՈԽ-ՎԻԼԻՆԵՐՈՒԽ

(34)



ԼԱԿԻԱՅԻ ԱՅԳՈՒՄ

ԱԿԱԴԵՄԻԿԻՆ

Թարգմանեց

Տաճատցակ. Մարաղեան

(Արտասոված „Նոր-Դաբ“ ամենօրեայ թերթից)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Պ. Շարանէի, Նիկոլ. փ. տ. 21

1898

"Հայոց" հուշաբիր ստորև երաշխաչով  
"Օպեր" Ա. Գոլովին մէջ առքիքութէ

83-3

4-57 ԱՐ

ԵՐԵՍ ԳՈՒ-ՎԻԼԻՔԵՆԵՐՈՒԽ

ԿԱՐԻԴԻԱՅԻ ԱՅԳՈՒՄ

Յանձնական

ԱՐԵՎԱԴՈՒԹՅԱՆ

1009  
6050

Թարգմանեց

Ճանաչած քահանայ Մարտինեան


(Արդարական նոր-Դար աւենորուայ թերթից)



ԹԻՖԼԻՍ

Ճպառան Մ. Չարաձեի, Սիկոր փ. ա. 21

1898



Ա.

Վերջապէս գիշերը պատեց արար աշխարհը և ամեն ինչ հանդարտուեց չուզմում։

Օգոստոսին տար ու անուշահոտ գիշերն այլս չիջաւ եօթքլրեան քաղաքի վրայ... օգոստեան գիշերն այլս այդ սարսափներով լի քաղաքում վկայ չեղաւ աւելի մեծ սարսափների։

Եթէ այդ գիշերուան նախընթաց երեկոյին որ և է ճանապարհորդ Փլամինեան ճանապարհով, հիւսիսային կողմից, մօտենար քաղաքին և անցնէր Փլամինեան կամուրջով, այժմեան Ponte Molle-ը, նա սարսափահար ու արձանացած կանգ կառնէր արինը երակների մէջ սառեցնող այն սարսափելի ձայների աղդեցութիւնից, որոնք համում էին Տիբրոսի միւս ափից, Ներոնի այգիներից—այնտեղից՝ ուր այժմ կանգնած է Ս. Պետրոսի եկեղեցին և Վատիկանի շինութիւնը։

Քաղաքի ծառերի թանձր թաւուտից բարձրացած գորեղ լոյսը ներկել էր երկինքը գեղնակարմրագոյն փայլով։

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Мая 1898 г.

— Միթէ դարձեալ հրդեն կայ չոռվմում...  
Միթէ...

Ամբողջ իտալիայում, գեռ ևս խօսակցութեան նիւթն այն սարսափելի հրդեն էր, որ քանի մի շարաթ առաջ դատարկեց յաւիտենական քաղաքը — աշխարհի մայրաքաղաքը:

Հրդենի մասին խօսողները կիսաձայն աւելացնում էին. — «Ասում են, հրդենել են... և զիտէր ով է արել... Կայսրն ինքը... Այս, նա ինքն է հրդենել չոռվմը: Նա այդ ժամանակ նուագարանը ձեռքին կանգնած էր Պալատինեան Բլրակի պալատի պատի վրայ և այն միջոցին, երբ հրային ծովը շառաչում էր նրա ոտքերի տակ, նուագարանի լարերի ձայնակցութեամբ Տրովագայի հրդեն էր երգում...»:  
Միթէ դարձեալ նմանօրինակ մի բան է կատարուում:

Բատ երեսյթին ոչ:

Բոցը մի տեղից միւս տեղ չէ փախչում, այլ դոհարանների կամ ջահերի բոցերի նման, հանդարտ բարձրանում է սիւնաձե դէպի երկինք:

Բայց ահա, արեմտեան կողմից մի քամու հոսանք, բոցեղէն սիւնը դէպի արեելը բշեց... դէպի մեր ճանապարհորդը:

— Այս, անշուշտ ճանդէս է կատարում...

Ճիւթի հօտ է փշում և մի ինչ որ սուր... այն, կարծես այրուած ու ածխացած մսի հոտ... չաւանական է, որ զոհացու կենդանիներ են զոհուում և այրում, ասաց ճանապարհորդն ինքն իրան:

Եւ ահա դարձեալ լսուեցաւ մի ինչ որ սարսափելի ձայն. մի, թէկ հեռուից հասնող, բայց մարդու արիւնը երակներում սառեցնող ձայն: Դա ոչ մռնչխն էր և ոչ ողբ ու կոծի ձայն... Սրդեօք դա վայրենի գաղանների ոռնալու ձայն չէր: Ոչ, դա ամբոխի ոռնալու ձայն էր. այն, անթիւ քանակութեամբ հաւաքուած հանդիսատեսների ձայն, որոնց այն հանդէսը արբեցրել ու գաղանացրել էր և արիւն արբութեան ու աւերելու ցանկութեան գաղաթնակէտին հասցընել: Այդ մռնչխնը կարծես դուրս էր գալիս այն կատաղի ու անմիտ ամբոխից, որին յանկարծակի արձակում են դէպի աղատութիւն...

Փլամինիան գոնից (այժմեան lorta de Porolo) սկսում էր մի փողոց, որ ուղղակի բաղար էր տանում, և արդէն Via Lateի (այժմեան Կորսոյի) վրայ, արդէն երկում էին մայացնող հրդենի հետքերը:

Աւերակ տների ածխացած կոճերը կմախք-

Ների նման դէպի երկինք էին ցցել իրենց գլուխները։ Թէի տուն ու տեղից դրկուածներին ապատանելու համար վրաններ էին խըփուած և ժամանակաւոր փայտեայ տնակներ շնուած, բայց նչ վրաններում և նչ էլ փայտեայ տնակներում մարդ չէր երեւում։ Ամբողջ չոռվմը այնտեղ էր, Տիբրոսի միւս ափը... չիւր էր ներոնին։

Նա իւր հապատակների համար մի այնպիսի հանդէս էր պատրաստել, որպիսին գեռ չէր եղել չոռվմում Ռոմուլոսի և Ռենոսի օրից։

Մեր ճանապարհորդն էլ զիմեց դէպի աջ, անցաւ լայն ու նեղ փողոցների լաբիւրինթուից և մօտեցաւ Տիբրոսի գետեզրին։ Նա տեղ համնելուն պէս, իւր աշքերին ներկայացող տեսարանի աղբեցութեան տակ շփոթուած արձանացաւ։ Pons Triumphalis կամուրջի վրայ, որ գրեթէ այժմեան «Հրեշտակի կամուրջ» տեղն է, ժողովրդի ահազին բազմութիւն էր խոնուած։ Եւ այդ բազմութեան գլխների վրայ մերկ նումիդիացիներին իրենց խլացնող աղաղակներով, ճօճում էին ձեռքներին բռնած բոցակիզուող ջահերը.. Յանկարծ լսուեցաւ ձիերի սմբակների ու անիւների ձայն և կամուրջի վրայ դուզս եկաւ մի կառը և սկսեց ամբոխը ճեղքելով առաջ գլուխուելու...

Այդ մի բաց կառը էր, նման կրկէսներում գործագրուող կառքերի։ Նրա անիւների ու մնացեալ մասի ամբողջ չէնքսը միապաղաղ ու կուց էր... կառքին լծուած էին ութն հատ (երկկարգ) ձիւնափայլ ձիերի...։

Զիերը վարող կառավարի մօտ մի մարդ էր կանգնած, որին հաւաքուած ու իրար հրող ամբոխը տեսնելուն պէս՝ երեսի վրայ ընկաւ և մի մարդ դարձած սկսեց բացականչել զմայ լուած...։

—Ave \*) Caesar! Nero! Nero!

Այս, ուս ներոնն էր, հանդիսատէրը։

Կառքին լծուած առաջին շորս ձիերը, ամբոխի աղաղակներից վախենալով, առաջին ոտքերը դէպի վեր բարձրացրին ու սկսեցին յիտ յիտ գնալ. կառքը մի ըռպէ կանդ առաւ այնպէս, որ շատ պարզ կարելի էր տեսնել կայսեր դէմքը։ Նա կանգնած էր կառքի մէջ ուղիղ, գլուխը դէպի վեր բարձրացրած։

Նա հագել էր նուրբ կիսաթափանցիկ կլտորից պատրաստուած ճերմակ ու թեթե հազուստ. ուսերին ձգել էր կարմրագոյն ոսկեթել կարով կիսածիրանի. մսեղ թերը մինչև ուսերը մերկ էին... Նա բռնել էր ձեռքին նուա-

\*) Կեցցէ՛ Կերոն Կայորը։

գարանը նիշտ այնպէս, ինչպէս բռնում են իրար հետ բաս մտնող հրավարակական երգիշները... Նրա սի ու զանգուր մազերը հազցրած էին թանկագին քարերով զարդարուած ութն հատ սրածայր ատամներ ունեցող ոսկեայ օղակի մէջ... Եւ առաջին անգամ նայողը կըկարծէր թէ նրա զլուխը սրածայր տէզերով է շըրջապատուած. .

Բոցերի կարմիր լոյսն ընկել էր կայսեր գէմքին. երևում էր որ շրջապատող վծուխն ու կիսայրեալ ածխի նուրբ գոլորշին նրա համար ամենասակալի, ամենակենսատու մթնոլորտն էին կազմում: Համարեա թէ նրա մի ժամանակ համակրելի և գեղեցիկ, իսկ այժմ արբեցութիւնից ու անառակութիւնից ուռած ու թմրած գէմքի վրայ՝ ժպիտ էր խաղում...

Եւ այդ ժպիտը ոչ թէ գէպի թողի մէջ թաթախուած ամբոխն ուղղուած արհամարհական կամ համակրելի ինքնաբաւական ժպիտ էր... այլ մի այնպիսի ժպիտ, որ ուղղում է մի հեշտասէր լաւ ճաշելուց յետոյ, կամ մի գեղարուեստասէր լաւ ներկայացում և կամ լաւ պատկեր տեսնելուց յետոյ: Նրա ձախ ձեռքի մատները մեզմ կերպով շարժում էին քնարի լարերը... Ներոնն իրեն բաղգաւոր էր համարում: Ո՞հ, ինչպէս սիրում են իրեն հռոմայե-

ցիները... ինչպէս զմայլում են... Ամեն մի խօսք, խստութիւն և հայեացը ասում են, որ ինքը մեծ մարդ է, կիսաստուած է... որ ինքը աստուած է...

Թէկ նրա ուռած գէմքի ստորին մասի վրայ խաղում էր ժպիտը և հրդեհի կարմրափայլ լոյսը կարմրագունել էր նրա տժգոյն և թառամած այտերը, սակայն նրա ուռուցիկ, մեռած ու անշարժ աչքերը՝ միանգամայն հակապատկերն էին ներկայացնում... Այդ աչքերի մէջ նշմարւում էր մի ինչ որ գատարկութիւն... Զկար նրանց մէջ ոչ ժպիտների, ոչ կենդանութեան և ոչ որևէ բանի զգալու ընդունակութիւն:

Արժէր գոնէ մի անդամ տեսնել այդ աչքերը, որպէսզի հասկացուէր, որ ամբողջ հռովմայեցի ժողովուրդը, ժամանակի ամբողջ աշխարհը, հոգով ու մարմնով գտնելում էր մի այդպիսի տխմար ու անմիտ անձի իշխանութեան տակ...

Նումիդիացիների զօրեղ բռունցըները վախեցած ձիերին կարգի բերին. կաւըն առաջ սլացաւ, ու կալծակի արագութեամբ անկայտացաւ Պալատինեան բլուրը տանող մուլթ փողոցներում: Հանդիսատէրը թողեց հանդէսն ու գնաց, երեխ տեսնելով որ ամեն ինչ հասել էր

իւր հեռակէտին, մօտեցել էր իւր վախճանին...

Դեռ կայսեր կառքը հաղիւ էր թագնուել, որ կամուրջի յատակը դղրդած ծանր ու շափաւոր քայլերի տակ: Նորից երեսց ջահերի լոյսը... ներկայացաւ մի նոր տեսարան: Այդ ներոնի այգիներից գուրս եկած թիկնապահների գունդն էր, որ նոյնպէս Պալատինեան բլուրն էր զնում: Այնտեղ էր գտնւում ներոնի զօրանոցը, ուր նա պահում էր իւր համար պալատ և պալատականներ:

Այդ թիկնապահները նշանակւում էին գերմաններից: Ներոնն աւելի յարմար էր համարում շրջապատել իրեն վարձկան գերմաններով, քան պրէտորիաններով:

Այդպէս աւելի ապահով էր զգում իրեն:

Պրէտորիանների մէջ ոչ սակաւ գտնւում էին նաև տեղացիներից՝ քաղաքացիներից: Այդ զօրաբանակի կարգերը լրացւում էին գլխաւորապէս հռովմայեցի բնակիչներով: Այն ժամանակները չուզմը նման էր մի ծովի, որ ամեն քամու ազդեցութիւնից խռովւում և ալէկոծւում է... Այսօր փոշու մէջ թաթախուած հռովմայեցին սիրում ու աստուածացնում էր նրան՝ ներոնին, բայց վազը կարող էր բոլորովին ու-

րիշ բան անել: Վաղուց չէր որ այս բանը պատահեցաւ: Երբ չուզմում լուր տարածուեց թէ ինրը կայսրն էր ժողովրդի գլխին հրդեհել բաղարը, զիտէթ թէ ինչպիսի զայրոյթի և վրէժինդրութեան աղաղակներ բարձրացան Պալատինում և ինչ կարող էր պատահել, եթէ որ վերջապէս չըյայտնուէր թէ որոնք էին այն անազնիները, որ այդպիսի անլուելի չարագործութիւն կատարեցին:

Բայց Գերմաններն այդպէս չէին:

Նրանք նշ բնոյթի փոփոխութիւն սնէին, նշ յամառութիւն... մինչև անդամ սեպհական կամք էլ չունէին: Նրանք իրենց կայսեր, իրենց հրամայողի վրայ նայում էին այնպիսի անսահման հլու հպատակութեամբ, որպիսին ունենում են Ալպեան լեռների միւս կողմից բերուած մեծ ու բրդոտ չները՝ դէպի իրենց տէրերը:

Այս էր պատճառը, որ կայսրն առանց գերման թիկնապահների պալատից գուրս և նշ մի քայլ չէր անում: Եւ այդ հեշտասէրը թէկ իւր մատի շարժումով կարող էր նրանց ամենքին էլ կառավարել, թէկ իւր մի ձեռքով կարող էր տպակու նման փշրել այդ հսկաներից որեէ մինին... Թէկ վերջապէս իւր մի հրամանով կարող էր պարտաւորեցնել նրանց

հարկաւոր դէպքում լեռնային գետակի արագութեամբ յարձակուել հոռվմայեցիների վրայ... Բայց չնորհիւ իւր վախկոտութեան, փափկութեան և հեշտասիրութեան, ամեն անզամ, երբ այդ լուակաց հսկաները հաւարում էին նրա շուրջը նրան պահպանելու համար՝ ակամայ սոսկում էր...

Զահերի լոյսի տակ այս հսկաների խմբի երևալը աւելի զիւթեց հոռվմայեցիներին, որոնք բերանը բաց և աշրերը չուած՝ նայում էին նրանց:

Զօրաբանակի առաջլոց զնում էին երկու գօրափարներ, նրանց շուրջը լիզելով թռչկոտում էին իրենց բրդոտ չները, որոնցից նրանք երբէք չէին բաժանւում:

Գերմանները զինուած էին ոչ թէ հոռվմայեցի զինուորների նման կարճ թրերով, այլ կողքերից կախուած երկար ու ծանրապատեան զէնքերով, որոնք իւրաքանչիւր բայլափոխին ահազին աղմուկ ու ձայներ էին արձակում:

Աւելի զիւթականը նրանց հագուստն էր, որ հոռվմէական զինուածքի ու գերմանական ազգային հագուստի մի խառնուրդ էր ներկայացնում:

Ամենքն էլ հագնուած էին հոռվմէական կիսաբանկոն, միան աւելի պայծառ ասեղնա-

գործած և թանկագին բարերով զարդարուած, որպէս վայել էր ներոնի թիկնապահներին: Գլխներին փոխանակ հոռվմէական հասարակ սաղաւարտների, կրում էին իտալիայում հազիւյատնի զագանների գլուխներ. օրինակ արջերի, գայլերի, ցուլերի և եղների... Այդ կենդանիների գլխներին երեսում էին ահազին եղջիւրներ և բաց բերանների մէջ փռուած էին սոսկալի ատամներ: Այդ զինուորներից մի բանին էլ զիմներին արծուի փետուրներն էին կրում և այդ փետուրներն այնպէս խիտ էին տնկուած, որ կարծես շարժուող թփեր լինէին: Բայց ամենին էլ միանման երկար, չէկ, համարեա գեղնագոյն մազեր ունէին, որոնք զըլ խի զարդերի տակից գանգուրներով ընկած էին դէմքերի վրայ:

Սեահեր հոռվմայեցիները որպիսի հետարբերութեամբ էին նայում այդ շտեսնուած և առասպելական մազերին... Ի՞նչ լաւ կը լինէր շօշափել ու շփել այդ մազերը, որ կարելի լինէր համոզուել, որ այդպիսի մազեր յիրաւի կարող են աճել մարդկային գանգի վրայ:

Բայց ինչպէս շօշափել այդ մարդկանց, մի այդպիսի վայրենի ու սոսկալի մարդկանց որոնք ոչնչով չէին նմանում հոռվմայեցիներին...

Եւ ի՞նչպիսի աչքեր... կապնյտ, մոխրա-

գմին... կանաչ... Գրեթէ անկարելի էր գոյնը որոշել, միայն հաստան այն էր, որ հռովմայեցիների աշքերի նման սկ չէին... և նրանց հայեացըների մէջ, որ թեթևակի ուղղուած էին ամբոխի վրայ, մի ինչ որ սարսափելի արտայայտութիւն կար: Նրանց այտերի ու ծնոտների վրայ թանձր անտառի նման բռւսած մօրուքները լայն ալիքներով իջնում էին նրանց կրծքերի վրայ: Համարեա այդպէս էր մեծամասնութիւնը, միայն կային և անմօրուքներ, որոնք հաւանականաբար դեռ մանկահասակ էին:

Այդպիսի անմօրումներից մինը, որ խիստ գեղեցիկ ու վայելչակազմ էր, գնում էր առաջին կարգում երկու զօրավարների յետեկց: Բոլոր կանանց զմայլուած հայեացըները ակամայից նրա վրայ էին ուղղուած: Նա ոչ մի կողմ չէր նայում, գերմանների դէմքին յատուկ մրտագրագութիւնը նրա մէջ գրեթէ թախծի էր փոխուած: Նրա անշարժ աշքերն ուղղուած էին դէպի առաջ, դէպի հեռուն, կարծես նա ներկայացնում էր իւր առաջ մի պատկեր, որ ոչ մի ընդհանուր կապ չուներ շրջապատսղների հետ:

Իւր հայրենիքն էր յիշում արգեօր, որ տարածուած էր Ալպեան լեռների միւս կողմը, թէ անտառները... գուցէ և յիշում էր իւր նը-

ման շիկահեր, իւր լեզուավ խօսող մարդկանց... Ոչ Աւելի շուտ կարելի էր կարծել, որ նրա ճակատը կնճռում է մի ինչ որ մթին պատկեր... մի ինչ որ յիշողութիւն այն մասին, որ նա ապրեց աչքով տեսնելու կայսեր պատրաստած հանգէոր, մասնակցելու այն հանդիսին որպէս թիկնապահ... Այս, թերեւս նրա առաջ ներկայացաւ այն սպատկերը, որից նա չէր կամենում հեռանալ, և որի համար համոզուած էր որ չի ձգի իրեն մինչի մահ...

Զօրաբանակը կայսեր կառքի նման անցաւ կամրջով, և անելքնայթացաւ Պալատինա տանող մութ փողոցների լարիւրինթոսի մէջ:

Դրանից յետոյ ժողովրդականները նախ վորրամասնութեամբ և առա ամբողջ խմբերով քաշուեցան իրենց տները, վրաններն ու փայտեայ տնակները:

Մեծամասնութիւնը իրար վրայ յենուած, գնում էր օրօրուելով ու սայթաքելով: Միքանիսներին մինչև անգամ հազիւ էին երկու երեք մարդով քարշ տալիս: Օղը լի էր հազարաւոր մարդկանց աղաղակներով ու հառաշանքներով:

Շատերի լեզուները կապ էին ընկնում... ինչպէս երեսում էր ներոնն իրեն հանգէոր յար-

գող հիւրերի համար զինի չէր խնայել: Եւ յի-  
րաւի, կային դինու ճակներ, որոնք ամբողջո-  
վին դատարկուած էին: Բոլոր խօսակցութեանց  
ժամանակ միայն մի անուն էր լուռում — «Ներոն»:

Թմբած զվարերի մէջ միմիայն մի միտք կար  
բնակալած — «Ներոն»:

Ներոն, հռովմայեցիների բարեկամ և յան-  
ցակործների պատժող... Ներոն-արուեստա-  
գէտ...

Ներոն — աստուած...

Նա պատժեց անազնիւ հրձիգներին, մար-  
դասպաններին ու շարագործներին...

Պատժեց որպէս հարկն էր, հիմնաւորա-  
պէս, որպէս զի այլոց ցանկութիւնն էլ ոչնչաց-  
նէ: Նա, որ հրդեհում է՝ կրակով պիտի մեռնի  
— այս էլ նրա նշանաբանը.

Ի՞նչ անենք որ փոքրոգիները կամենում  
են համոզել, որ պատիժը չափազանց սարսա-  
փելի էր: Կարծես թէ մի այդպիսի յանցագոր-  
ծութեան համար մի ուրիշ աւելի յարմար պա-  
տիժ կարող էր գոյութիւն ունենալ: Ի՞նչ անենք  
որ ասում են, թէ, շատերը փախել են վախից  
ու մինչև անգամ ուշաթափուել են: Խիստ հիա-  
նալի տեսարան էր: Ներոնն իրաւոնք ունէր և  
խելօք էլ վարուեց:

Երբ հարկաւոր էր հետարրբուել թէ ով


հրդեհեց չռովմը, այն ժամանակ նւր էին կո-  
րած փիլիսոփաներն իրենց փառաւոր իմաստու-  
թեամբ: Ինչ արաւ Պրէտորիաների պրէֆէկտ  
հաստլիկ ու ծոյլ Բուրրը, որի պարտքն էր հո-  
գալ քաղաքի ապահովութեան վրայ: Նա ի՞նչ  
արաւ:

Ոչինչ:

— «Կրակն սկսուել է ձիթի ամբարներից»  
— ահա այն բոլորը, ինչ որ նա կարողացաւ  
ասել: Ահա և նրա բոլոր իմաստութիւնը...  
Սրահելի իմաստութիւն... կարծես թէ ձիթն  
ինքն իրեն կարող էր այրուել:

Այս ուզգակի հրձիգութիւնն էր և այս երե-  
խան անգամ կը հասկանայ: Այս: Բայց ով էր  
հրդեհովը... Ներոնն ինքը չէր արդեօր... Ո՞ր-  
պիսի ստորութիւն... Այդ անպատշաճ լուրը  
սենատորները թոցրին և հասկանալի է թէ  
ի՞նչի... Բայց ամեն որ էլ զիտէ, որ նրանք  
ասում են ներոնին... Անշուշտ նրանք կը ուու-  
ժեն իրենց ատելութեան համար...

Եւ այսպէս, ոչ ոք ոչինչ չգիտէր, մինչև  
որ ինքը կայսրը գործի ձեռնամուխ չեղաւ:  
Միայն յետոյ պարզուեցաւ ամեն բան, յետոյ  
բացուեցան ամենիրի աշքերն ու հասկացան, որ  
քրիստոնեաներն են հրդեհել քաղաքը... Եւ ի՞նչ-  
պէս որ առաջ այդ բանը ոչ որի մարդ չա-



ցաւ... Միայն ներոնը... այն նա... նա ամեն.  
քից էլ խելօր է...

**Քրիստոնեաներ...**

Այս անոնը վազուց էր յայտնի չոռվմում,  
բայց ոչ որ չէր հետաքրքրում... Եւ մի՛թէ  
արժէր այդ յայտնի ցնորուած մարդկանցով  
զբաղուել... Ճատ շատ կարելի էր նրանց վը-  
րայ ծիծաղել...

Դրանք գաւանում էին: մի ինչ որ կրօնա-  
կան աղանդ, որի նմանները առանց այն էլ  
քիչ չեն չոռվմում: Եւ ի հարկէ չրէաստանից  
եկած, որովհետև բոլոր աղանդներն այնտեղից  
են գալիս: Սկզբում նրանց հրէաների տեղ ըն-  
դունեցին, բայց հրէաները յայտնեցին, որ ոչ  
մի ընդհանուր կապ չունին քրիստոնեաների հետ:

Ճատ գեղեցիկ: Նշանակում է դրանք հրէաներ  
չէին, այլ իրենց տեսակում յայտնի յիմարներ...

Այն ամենն, ինչ որ մինչև օրս կարելի էր  
լսել նրանց սկզբնաւորութեան, նրանց հաւա-  
տի և նրանց կեաների մասին, այնպէս ծիծա-  
ղելի և անմիտ բաներ էին, որ ոչ մի խելացի  
հոռվայեցու չէր կարող վախեցնել:

Երուսաղէմի հրէական ուսումնարաններում  
երեեցաւ մի ինչ որ Մարդ<sup>1)</sup>, հասարակ ծա-

<sup>1)</sup> Յիսուսի Քրիստոսի մասին է Խօսքը: Ծ. Թ.

գումից, չրէաստանի մի խուլ անկիւնից—թեր-  
և նազարէթ բաղաքից և յանկարծ յայտնեց,  
որ այս աշխարհի կեանքի եղանակը միանգա-  
մայն անսպէտը է և թէ այն աստուածները, ո-  
րոնց հաւատում էին մարդիկ՝ սուտ են: Ճատ  
հասկանալի է, որ նրան ամեն տեղ ծաղրեցին  
ու ամեն տեղից գուրս վանդեցին:

Այն ժամանակ նա անապատ գնաց, որ-  
տեղ աւելի յարմար էր բարողել, որովհետեւ  
այնտեղ նրա հետ ոչ որ չէր կարող վիճել...  
նրա յետելից վազեցին զանազան ջիրգիրներ,  
անարհեստ արհեստաւորներ, անգործ ձկնորս-  
ներ ու շրջանիկներ: Նա պատմում էր նրանց,  
որ մարդկանց կեանքը իսկապէս սկսւում է մահից  
յետոյ և թէ այստեղի հարսւատների համար  
այնտեղ բոցերի, բաղցի ու ծարաւի մէջ, չա-  
փազանց անհաճոյ կը լինի... իսկ այստեղի  
բաղցածների համար ընդհակառակն շատ հա-  
ճելի կը լինի, տեսնելով իրենց մշտապէս հա-  
մադամ խորտիկներով ծածկուած սեղանի ա-  
ռաջ:

Վերջապէս այն գաւառի պրէֆէկտը<sup>1)</sup> մի-  
ջամտելով գործին, բարողչին բանտը նստաց-

<sup>1)</sup> Հրէաստանի պրէֆէկտն այն ժամանակ  
պոնտացի Պիղատոսն էր: Ծ. Թ.

բեց. Խսկապէս նա էլ էր խղճում այդ խելացնոր թշուառին։ Քարոզիչը ի միջի այլոց հաստատում էր, որ Ինքը հրէական մի հին թագաւորների սերունդից է ծագում և թէ կոչուած է մի նոր հրէական թագաւորութիւն հիմնելու... Եւ այսպէս սլրէֆէկտը՝ նրա վարպապետութեան մէջ վինասակար սերմեր գըտնելով, ըստ Principis odsta-ի հրամայեց ի դգուշութիւն և յօրինակ այլոց, ամենաամօթալի կերպով պատժել նրան, այսինքն հրապարակաւ ձաղկել և ապա ուրիշ յանցագործների հետ աւազակներին ու մարդասպաններին պատժելու համար որսչուած տեղում՝ խաչել։

Պրէֆէկտը մտածում էր այդ միջոցներով  
շարկը խափանել ու խեղպել։ Ուրիշներն էլ  
այդպէս էին մտածում։ Բայց բանէց դուքս ե-  
կաւ, որ մինչև օրս էլ կան այնպիսի մարդիկ,  
որոնք նոյն զառանցաներներն են կրկնում ու հա-  
ւատում։ Եւ ոչ միայն չըէասանում, այլ և  
այստեղ — չուովմումն էլ կան այդպիսի մար-  
դիկ։

**ՊԵՂԻ:** Ասենք պէտք էլ չէ զարմանալ, որովհետեւ  
այն ամեն յիմար կամ խելօր բաները, որ մարդ-  
կանց խելքիցն է դուրս գալիս, բոլորն էլ կա-  
րելի է գտնել չռովմում, ինչպէս մի մեծ կաթ-  
սայի յատակում։

Այս նոր վարդապետութեան վրայ, առաջ շատ փոքր ուշագրութիւն դարձուեց, այն սկզբունքով, որ ամեն մի լիմարութիւն, վերջ ի վերջոյ, ինքն իմենք կանհետանայ... բայց այս հանդամանքում, այդ սխալ դուրս եկաւ:

Յայտնի էր վազուց, որ բրիստոնեաները  
գիշերով հաւաքւում են այրերում և դատարկ  
գերեզմաններում, և այնտեղ լրենց աղօթողնե-  
րի հետ ի միասին խնչ որ խօսքեր են կրկնում,  
երդեր երգում և առհասարակ զանազան միս-  
տիքական լիմարութիւններով պարապում։

Սւելի խելացինները հէնց այն ժամանակ  
առում էին. — «Զգուշացէր, դրանք մարդկային  
սեփի թշնամիններ են, դրանք խլսուրդներ են,  
որ ձեր ոտքերի տակի հողն են քանդում»։ Բայց  
դրանց ծազրում էին։ Եւ այնքան ծազրեցին,  
որ վերջապէս այրերի ու գերեզմանների միջից  
բարձրացաւ շարագործի ձեռքը և կրակ թա-  
փեց խաղաղ քաղաքացինների տների վրայ։ Այժմ  
ամենին էլ իմացան... թէ ով էր յանցաւորը։

Եւ յանկարծ, միանգամից քրիստոնեաների վերաբերմամբ այնպիսի բաներ յայտնուեցան, որոնց վրայ առաջ ոչ ոք չէր կասկածում։ Այսպէս, յայտնի եղաւ, որ նրանց գիշերային ժողովատեղիները, ինչպէս առաջ կարծում էին, այնքան էլ անմեղ բաներ չէին։ Այնպիսի ըլլո-

սուած բաներ իմացան, որ բարեկիրթ հասարակութեան մէջ յիշելն անգամ անկաղելի է... կատարեալ անհաւատալի բաներ:

Որպէսզի ապացուցանենք այդ աղանդի խոր անբարոյականութիւնը բաւական է ասել, որ նա իբրև նշան ընտրել է այն գործիքը, որի վրայ նրա հիմնաղիքը պատժուեցաւ — խաչը:

Խաչը մի ամենազգուելի, զարշելի ու նախատանաց նշան էր համարւում իւլաքանչիւր բարեկիրթ մարդու համար: Խաչի վրայ պատժում էին միայն այնպիսի յանցագործների, որոնց մէջ արմատացած էր չարագործութեան ոգին. եթէ պատահէր, որ կատարուած յանցանքը կարող էր մի փոքր ներման արժանանալ, այն ժամանակ մեղադրեալին ազատում էին խաչից և պատժում էին որով: Պէտք է յիշել, որ չոռվմի քաղաքացիները միանգամ ընդ միշտ ազատ էին խաչուելուց:

Եւ ահա, այդ ամբողջ լուսաւորեալ աշխարհին սարսափեցնող և զարշելի առարկան, ըրիստոնեաների համար որբութիւն էր զարձել:

Ասում են, որ նրանք ծունկ են չոքում խաչի առաջ և ազօթում են: Թէ և անհաւատալի է թուում այդ, բայց ինչ արած, որ իրողութիւն է և այն՝ առանց չափաղանցութեան:

Եւ կարելի է արդեօր երեակայել զրանից աւելի անամօթ հայոյանը դէպի ամեն մի բարոյական սկզբունք կամ սրանից աւելի համարձակ հակառակութիւն դէպի հաստատուած հասարակական կարգերը:

Այժմ բացուեցաւ, որ այդ գիշերային ժողովատեղիները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամենատանձարձակ և մոլեզնութեան աստիճանին հասցնող զգացմոնքների տօնախմբութիւն:

Այդ ժողովատեղիներում դրուած վայտեայ խաչի վրայ, նրանք կապում են ներկայ եղողներից մինին, օրինակ մի գեղեցիկ պատահու, հանում են նրա վրայից հագուստները և նա կախուած է խաչից միանգամայն մերկ, կանանց և տղամարդկանց առաջ:

Այդ ժողովատեղիները ոչ միայն տղամարդիկ են յաճախում, այլ և կանայք և օրիորդներ: Մինչև անգամ կանայք աչքի ընկնող գեր են կատարում: Նրանք են այդ նոր վարդապետութեան ամենանախանձախնդիքը և եռանդուն տարածողները:

Եւ եթէ այդ աղանդին պատկանող տղամարդիկ գրեթէ ստորին գասակարգից են լինում, ընդհակառակն կանայք, բարձր մինչև իսկ բարձրագոյն գասակարգին պատկանողներ են. խօսում են մի քանի ազնուատոհմ ընտա-

Նիքների մասին, որ իբր թէ նրանց աղջիկները հրապուրուելով այդ սուտ աղանդից, գիշեր ները փախչում են իրենց հայրական տնից և գնում են ժողովատեղիներն իրենց համախոհ ների մօտ:

Պատմում են այն ընտանեկան գժտութեանց և տեսարանների մասին, որ տեղի են ունենում այդ աղնուատոհմ ընտանիքների մէջ: Մայրերը կամենում են ծածկել իրենց աղջկանց ամօթալի վարմունքները. իսկ հայրերը իմանում են այդ... և ահա սկսում է ծեծը, հայնոյանքը և մինչեւ իսկ հայրերը ստիպուած գուրս են անում իրենց աղջիկներին... Քանի քանի այդպիսի մարդիկ, որոնք առաջ ամբոխի մէջ ժպիտն երեսին էին գուրս գալիս, այժմ հոգեկան յուսահատութեան մէջ են ապրում: Նրանք ի հարկէ մտածում են թէ ինչ կըլինի եթէ մի կողմնակի մարդ իմանար, թէ նրանց մանկահասակ աղջիկները ինչ են շինում... ում հետ են տեսակցում այնտեղ և ինչնի են զբաղուած նրանք...

Պատմում են, որ այդ աղանդաւորների սանձարձակութիւնը հասնում է զագաթնակետին, ճրագները հանգցնում են և ներկայ եղողները մթութեան մէջ սկսում են իրար զրկայառնել... համբուրել... և վերջը այնպիսի բա-

ներ են տեղի ունենում, որից ազնիւ հռովմայեցիների արիւնը սառում է երակների մէջ.

Բայց այժմ այդ բոլորին վերջ է տըրուած:

Այսօր կայսեր ձեռքը ներս թափանցեց քրիստոնեանների որջերն ու գուրս քաշեց նըրանց դէպի լոյսը, որպէս զի ժողովաւրդը կարողանայ տեսնել այդ մարդկային սեռի թըշնամիններին... այդ հասարակութեան խլուրդներին... Բայց պիտի խոստովանել, որ աղանդաւորները մինչեւ վերջը լաւ տարան իրենց դերը...

Նրանցից իւրաքանչիւրին առանձին տառնձին հարցնում էին.

— Խոստովանման է որ ինքը քրիստոնեայ է:  
— Christianus տառ<sup>1)</sup> պատասխանում էր իւրաքանչիւրը:

Այնուհետև հարցնում էին. — Խոստովանման է որ ինքն է հրդեհել չոռվմը:

Ամենքն էլ նոյն պատասխանն էին տալիս:  
— Ոչ, մեղանից և ոչ մինը չի հրդեհել չոռվմը:

Այն հարցին, թէ ինչ հիմունքով է նրանցից իւրաքանչիւրը ուրիշի տեղ պատասխա-

<sup>1)</sup> Քրիստոնեայ եմ:

նում. միթէ նրանք ճանաշում են իրար: Պատասխանում էին.

— Այս, սենք ամենքս ճանաշում ենք իրար: Քրիստոնեաները, չնայելով որ մէջները կային ուժեղ և առողջ մարդիկ և միևնույն ժամանակ թուլակազմ և քնքոյց կանայք և օրիորդներ, բայց այնու ամենայնիւ ամենքն էլ առանց հակառակութեան, առանց արտասուբքի ու բողոքի թոյլ էին տալիս, որ կապեն իրենց սիւների վրայ:

Բանն այն է, որ հանդիսականների մէջ կային այնպիսի յիմարներ, որոնք բրիստոնեաների արարմունքը զարմանալի ու հերոսական էին գտնում: Մինչև անգամ այնպիսիներն էլ գտնուեցան, որոնք բաթանի նման գունատուել էին և իրենց երկիւղ ազգող հանդէսից փախչում—երես էին դարձնում. բայց այդպիսիների թիւը քիչ էր: Շատերն սկզբից մինչեւ վերջը դիտում էին հանդէսը և զուարձանում... Եւ յիրաւի, դա մի այնպիսի տեսարան էր... այնպիսի տեսարան որ...

Եւ ահա նա հասաւ իւր վախճանին:

Մարդկային անգթութիւնը, որ գիշատիչ ցինի նման տարածել էր իւր արինաթաթախ թերերը այդ թշուառների կոյտի վրայ՝ արդէն յագեցել էր... Սեղանը վերջացած էր... զոհերը լափուած էին...

Վերջացաւ շիկացած սիւների վրայ տանցուող մարմինների ջլաձգութիւնը... Վերջին բովելին ամենքը բերանից միայն մի բացականշութիւն լսուեց... «Ովսաննա»:

Եւ քրիստոնեաները որանով դիմաւորեցին մահուան...

Արդէն ամեն բանի բաւականութիւն էր տրուած... Յագեցած էր արեան ծարաւը... Արինալի խնձոյքը վերջացաւ...

Նրանք, որոնք կարող էին ոտքի վրայ մնալ, օրօրուելով ուղղուեցան դէպի տները... և նրանք՝ որ չէին կարող ոչ կանգնել և ոչ գնալ, տեղնուտեղը փուլեցան մարդկային մարմինների կոյտեր գոյացնելով... Կոյտեր, որոնք յաւիտենական բազաքի հրաբխային լեռների բերաններից գուրս վիժած, սառած լաւան էին յիշեցնում:

Լոեց ամեն ձայն... և խաղաղ հրաշալի օգոստոսեան գիշերը քօղարկեց իւր անուշահոտութեամբ մարդու ձեռքով կատարուած բոլոր անկարգութիւնները...

Բայց զրա փոխարէն ներոնի այգիներում սկսուեց մի նոր, անխօս և գրեթէ խորհրդաւոր կեանք:

Որտեղից որ, ներոնի այգիներում այլ մարդկանց ստուերներ երեցան. որանք անխօս

ու անձայն բայլերով յետ ու առաջ էին ցատկում... Դժուար էր վճռել թէ նրանք որտեղից երևեցան։ Առաջ միայն մի քանիսն երևեցան, յետոյ փոքր առ փոքր շատացան։

Նրանք հազիւ նկատելի նշաններով էին խօսում, և երեսում էր, որ մի ինչ որ ընդհանուր գործի ձեռնամուս լինելու պատրաստութիւն էին տեսնում։ Այնպէս զգուշութեամբ էին ոտք կոխում, որ կարծես վախենում էին հրել և կամ ընածներից որ մինի լանկարծ արթնացնել։

Դրանք այսօրուան կոտորածից վախած և թագնուած բրիստոնեաներն էին, որոնք եկել էին իրենց վերջին պարտը կատարելու և մեռած եղբայրների հողանիւթ մնացորդները թաղելու...

Երկար չըփնտրեցին։

Այգու ամրող երկարութեամբ տնկուած էին երկիարգ սիւներ, որոնց վրայ այրուելու համար կապուած էին մարտիրոսները...

Սծխացած փայտեայ սիւները գեռ մխում էին գիշերային մթութեան մէջ։ Իսկ նրանց ստորին մասի վրայ, որտեղ գեռ չուաները չէին այրուել, գեռ կախուած էր մնացել այն, որ մի փոքր առաջ մարդկային մարմին էր... բայց արդէն այրուած, ածխացած և այլանդակուած։

Օդի մէջ հեղձուցիչ ծուխ էր տարածուած։ Աշխատանքը թէկ տաժանելի էր, բայց այնուամենայնիւ քանի գեռ մութ էր, հարկաւոր էր առանց յապաղման վերջացնել։

Առանձին անդամներն ու մասերը և այն ամենը, որ գեռ կարելի էր մարդկային համարել, զոկում, գնում և կամ փաթաթում էին առաջուց յետները բերած քաթանէ պարկերի և սաւանների մէջ։ Իսկ այրուողներին՝ հանգնում էին և այդ ամենը կատարում էր տենդային արագութեամբ, առանց մի բառ արտասանելու։

Միայն մի սիւնի առաջ մի փոքրիկ շփոթութիւն տեղի ունեցաւ։ Յանկարծ մարդկային խորհրդաւոր ստուերները շրջապատեցին մի սիւնի։ Աշխատանքը դադարեց։ Բոլորի աշքի առաջ ներկայացաւ մի զարմանալի և անհասկանալի երեսոյին։

Այդ սիւնի վրայ կապուած էր մի նորատիկին, մի սրանչելի արարած։

Եւ զարմանալի բան... այն աւերածութիւնը, որին ենթարկուել էին բոլոր այրուածների մարմինները, նրան գրեթէ չէր գիպել։

Այն սիւնը՝ որի վրայ կապուած էր կինը, կոպիտ խաչի ձև ունէր... Ընդմիջող մասի վըրայ կապուած էին նրա ճերմակ, փափուկ և

դեռ ևս մահից չսառած ձեռքերը... Դլուխը  
խոնարհած էր կրծքի վրայ... և ու երկար  
մաղերը ցած էին թափուել մինչև ազգերը,  
ծածկելով նրա կուրծքը. Դէմքը մի կողմ էր  
դարձուած... թւում էր թէ նա քնած է...  
Դէմքի վրայ ոչ մահուան երկիւլ էր նշմարւում  
և ոչ էլ վիշտ... կարծես ժպիտ էր սառած  
նրա դէմքի վրայ: Նրա շրթունքները կիսաբաց  
էին և կարծես վերջին րոպէին, այն մինմոյն  
քաղցր ու երանելի խօսքն արտասանած լինէին:

Ըրջապատովներն անձայն նայում էին նրա  
վրայ... նրանց այտերի վրայից արտասուլներ  
էին հոսում... Յանկարծ ամբոխի մէջ տարա-  
ծուեցաւ մի խուլ շշնջիւն... լսուեցաւ միայն  
մի անոնն «Կլաւդիա»... <sup>1)</sup>

Յանկարծ ամենքի ձեռքերն էլ ակամայից  
վեր բարձրացան ազօթելու համար... կարծես  
մի հրաշք էր կատարուել... բայց ինչի՞ էր նա  
մեռած... ի՞նչն էր նրան մահ պատճառել...  
Անողորմ բոցը, դիպչելով միայն ոտքերին, լա-  
փել էր մինչև ծնկները: Մարմնի ամբողջ վե-

<sup>1)</sup> Կլաւդիան այն օրինակելի բրիստոնեայ  
Կլուդիան է, որին յիշում է Պողոս առաքեալը իւր՝  
Խփեսացիների եպիսկոպոս Տիմոթէոսին գրած երկ-  
րորդ թղթի Դ. գլուխ 21 համարում: Ծ.Թ.

րին մասը մնացել էր անազարտ: Նկատելի էր,  
որ ցախի կոյտը որով շրջապատուած էր միւս.  
սիւների հետ նաև այդ սիւնը, ոք մինի ձեռ-  
քով ցրուած էր... բացի դրանից ոտքով կո-  
խոտուած էր նաև ձիւթաթախ փշենին, ոք  
պատրաստուած էր խարոյկն աւելի շուտ բոր-  
բռքելու... այդ անողն անշուշտ նպատակ էր  
ունեցել ազատելու օրիորդին բոցերից...:  
Յանկարծ լսուեցաւ մի մեղմ բացական-  
չութիւն: Ամբոխի միջից մինը մօտեցաւ սիւնին  
ու հանելուկը լուծուեցաւ:

Մօտեցովը մատը գնելով նորատի կնոջ  
կրծքի վրայ, շփելով տարաւ յետեի կողմը և  
սրտի հանգիպակաց տեղում մէջքի վրայ, ցոյց  
տուեց մի անցք, որի միջով ըստ երեսյթին  
անցել էր մահը...:

Նորատի կնոջ ճերմակ կաշուի վրայ երե-  
ւում էր մի նեղ վէրք, որի շուրջը արդէն ցա-  
մաքել էր մի բանի կաթիլ արիւն: Վէրքի անց-  
քը բաւական լայն էր հոռվմէական հարթ ու  
կարծ սրի համար, բայց բաւական էլ նեղ՝ սու-  
սերի համար:

Բայց ի՞նչպիսի զէնքով էր տրուած այդ  
վէրքը... Ո՞ւմ ձեռքով էր տրուած...

Յամինայն դէպս երևում էր, որ այդ գոր-  
ծը մի փորձառու և զէնքի հետ վարուելու ձևն

իմացող ձեռք էր կատարել, երեսում էր նոյն-պէս, որ մահացնողին յայտնի է եղել թէ մարդկային մարմնի այնտեղն, ուր եռում է կեան-հարուածով ոչնչացնել այն...

Վէրըն ուղղակի գէպի սիրտն էր գնում։ Ահա այս էր պատճառը, որ նրա դէմքը խա-ղաղ արտայայտութիւն ունէր... նման այն մարդկանց գէմքին, որոնք մահանում են սրտի պայթիւնից...

Ո՞վ կարող էր տալ այդ վէրքը... Ինչի... ե ինչ նպատակով։

Դա մի համելուկ էր և խիստ խորհրդա-ւոր հանելուկ։

Երբ կնոջ կապուած ձեռքերը բացեցին, նկատելի եղան այն խոր ակոսները, որ ձգել էին չուանները նրա ձեռքերի վրայ... Անկենդան դիակը ծանրութեամբ ընկաւ ցածում կանգնած մարդկանց ձեռքերի վրայ։ Դարձեալ մի բոպէ մարդկանց ձեռքերի վրայ։ Դարձեալ մի բոպէ մարմինն արդէն փաթաթուած էր մի մեծ սաւանի մէջ։

Գործը վերջացած էր։

Մարդկային խորհրդաւոր ստուերները ինչ-պէս անձայն եկել էին, նոյն ձեռվ էլ հեռացան այգուց, տանելով հետները իրենց որսերը և երբ արևի առաջին ճառագայթները ընկան քա-

զարի վրայ և արթնացըին խաղաղ հոռմայեցի-ներին, նրանք զարմացած սկսեցին նայել լի-րինց շուրջը...

Պատժատեղին արդէն մարրուած էր...

Միայն տեղատեղ երեսում էին ու ու ած-խացած սիւները... Իսկ այրուած բրիստոնեա-ների մարմինների և նշ հետքն էր երեսում...

Արթնցած քաղաքացիները գեռ տրորում էին իրենց աշքերը... նրանք տպշած էին... Երեկի չար ոգիներն էին զիշերով այդ կարգա-գրութիւնն արել և բրիստոնեաներն անշուշտ յարաքերութիւն ունէին այդ ոգիների հետ։

Հսկողութիւնն էր հարկաւոր։ Երեսում էր, որ որո՞ները գեռ արմատահան չէին եղած։ Ե-րեկումն մանգաղի հարուածները գեռ չէին ո-չնչացըել ամենին... Հաւանական էր, որ բազ-մաթիւ չարագործներ գեռ ևս թագնուած են բագարի մէջ։

Այդ բապէից իւրաքանչիւր հոռմայեցի պիտի մի խուզարկու գառնար և ամենայն տեղ բրիստոնեաներ գնտրէր...

## Բ.

Հանդիսի հետեւալ առաւտեան երբ արեն արդէն բարձրացել էր, ծերունի գորգագործի  
3

կին Պրիսցիլան վերադառնում էր վաճառա-  
նոցից:

Այն տունը, ուր քնակւում էր նա իւր ա-  
մուսնու հետ, բաւական հեռու էր բաղարից,  
նա դժուում էր Ապօեան ճանապարհի վրայ,  
չորրորդ մզոնանիշ բարի մօտ:

Պրիսցիլան գնում էր արագ քայլերով:  
Համեմելով տան գոնեներին, նա մի րոպէ կանդ  
առաւ, վախեցած նայեց շուրջը և վերջապէս  
ոտքը ներս գրեց շէմքից ու իւր ետեից դուռը  
փակեց:

Սենեակում, ուր նա մտաւ, մահճակալի  
վրայ խաղաղ քնած էր մի ծերունի: Այդ նրա  
ամուսին Ակվիլան<sup>1)</sup> էր:

<sup>1)</sup> Այստեղ յիշուած Ակվիլան և սրա կին  
Պրիսցիլան ոչ այլ ոք էին, եթէ ոչ նոր Կտակա-  
րանի մէջ յիշուած Ակիւլան և սրա կին Պրիսկի-  
լան. իրենք Պոնտացի էին՝ ազգով հրէայ և բը-  
նակւում էին Հռովմում: Վերջը քրիստոնեաների  
հալածանքի ժամանակ ի թիւս այլ քրիստոնեա-  
ների արտաքսուեցան Հռովմից և տեղափոխուե-  
ցան Կորնթոս: Սրանք Պօղոս Առաքեալի ամենաե-  
ռանդուն գործակիցներն էին (Տես Գործք Առա-  
քելոց Ժ. Գլուխը. Թուղթ առ Հռովմ. Ժ. 3—4.  
Ա. Կորնթ. Ժ. 19. Բ. Տիմոթ. Դ. 19):

Ծ. Թ.

Պրիսցիլան հանգարտութեամբ զամբիւղն յա-  
տակի վրայ գրեց ու կանգնեց քնածի առաջ,  
կարծես խնայելով նրան արթնացնել: Ծերունու  
ձեռքերը ծալուած էին այնպէս, ինչպէս այդ  
քրիստոնեաներն են անում աղօթելիս:

Նա զիտէր, որ իւր ամուսինը ամբողջ գի-  
շեր չէր քնել, որ նա ուրիշների հետ ի միա-  
սին գնացել էր ներոնի այդիները իւր մեռած  
եղբայրակիցների ամիւնները հաւաքելու: Նա  
միայն արշալոյսին էր տուն եկել և յոզնածու-  
թիւնից թուլացած խուրձի նման ընկել էր ահ-  
կողնի վրայ:

Բայց այնուամենայնիւ հարկաւոր էր նրան  
արթնացնել:

Պրիսցիլան զգուշութեամբ անկողնի ա-  
ռաջ ծունկ չափեց: Նա իւր ձեռքերով բռնեց  
ծերունու կրծքի վրայ ծալուած ձեռքերը և մօ-  
տեցնելով իւր շրթունքները նրա ականջին շր-  
չնչաց.

— Ակվիլա...

Ծերունին իսկոյն արթնացաւ. Նրա քունը  
շատ զգայուն էր, նման այն մարդու, որ շրջա-  
պատուած է վտանգով, և կամ զինուորի, որ  
քնած ժամանակն էլ զգում է թշնամու մօտե-  
նալը:

Պրիսցիլան քնքառութեամբ զրկեց նրան:

— Ակվիլա, ասաց նրան մեղմ ձայնով, իմ թանկագին Ակվիլա, ինձ թւում է, որ հասել է ժամը: Տէրը կամենում է մեղ իւր մօտ կանչել:

Ծերունին նստեց անկողնում: Նրա ընաթաթախ աշքերը յանկարծ լուսաւորուեցան: Նա իւր երկու ձեռքերով շփեց Պրիսցիլլայի մազերն ու դէմքը:

— Եւ միթէ դու որ և է բան ես նկատել, հարցրեց նա կիսաձայն—դու կարծմամ ես, որ դտել են մեր հետքը:

— Այն, պատասխանեց նա, գժուարութեամբ չնշելով: Դու գիտես որ կայսեր խուզարկուները դեռ որոնում են րիխտոնեաներին և չեն դադարել բաղաքը խուզարկելուց: Բայց եթէ լսել էիր թէ հէնց այժմ վաճառանոցում ի՞նչ էին խօսում...

Պրիսցիլլան այլ ես չլարողացաւ շարունակել՝ լսեց և խոնարհեցրեց գլուխը:

— Ահա, հէնց այժմ, ոկտեց նու նորից, — երբ ես անցնում էի Ապահեան ճանապարհով, երրորդ մղոնանիշ քարի մօտ, նկատեցի կայսեր զինուորներից մինին: Ճանաչմամ ես այդ օտարերկրացիներին, որ իրենց գլխներին գազանի գլուխ են կրում:

— Նրա թիկնապահներին... ասաց Ակվիլան:

— Այն, նա կանգ առաւ մղոնանիշ քարի մօտ, կարծես ինչ որ հաշուելով... այնտեղ ես նրան թողի ու առաջ անցայ:

Տղաները շրջապատել էին զինուորին նրան տեսնելու համար. բայց նա յանկարծ հարցրեց նրանց. — «Զգիտէք արգեօք թէ մրտեղ է բնակւում ոստայնանկ Ակվիլան:

Ծերունու ձեռքերը թեթևակի դողացին:

— Ի՞նչալէս... միթէ նա անունս էլ տուեց, հարցրեց ոստայնանկը զարմացած:

Պատասխանի փոխարէն Պրիսցիլլան հառաջեց: Նա կամեցաւ ոլատապահանել, բայց չկարողացաւ:

Ծերունին բարձրացրեց նրան և նստեցրեց իւր մօտ անկողնի վրայ:

— Յիշիր Յիսուսի խօսքերը. — «Նա, որ ինձ հաւատում է թէ և կըմեռնի, բայց պիտի ապրի»: Զէ որ մենք հաւատում ենք նրան... Այդպէս չէ, ասաց ծերունին զրկելով նրան...

Պրիսցիլլան լուսթեամբ շարժեց իւր գլուխը:

— Ուրեմն բաջացիր... զուտով մենք կլտեսնենք նրան, որին այսքան ցանկանում ենք: Պրիսցիլլա, միթէ ուրախ չես, որ մենք երես առ երես պիտի տեսնենք նրան...

Նա նորից ի նշան հաւանութեան շար-

Ժեց գլուխը աւելի մօտենալով իւր ամուսնուն։  
Այսպէս, նրանք նստած մնացին մի առ  
ժամանակ կարծես սպասելով թէ երբ պիտի  
խփէ վերջին ժամը...

Յանկարծ ծանր բայլերի ձայներ լսուեցան։ Ոք մինի ձեռք բռնեց դրան կօճակն ու  
շարժեց։ Բայց գուռը փակուած էր և չըբացուեց։ Այն ժամանակ ձեռքի ափով բաղխեցին  
դուռը... Ամուսիններն ակամայից վեր թռան  
տեղից ու գունատուեցին։ Դրան յետել կանդնած էր մահը։

Պրիսցիլան կորցրեց արիութիւնը։ Նա ընկաւ ծնկների վրայ, գուրս բաշեց բարձի տակից փայտեայ խաչը, սեղմեց իւր ձեռքերի մէջ ու մօտեցրեց դէմքին... Այդ ժամանակ նրա շրթունքներն ազօթր էին մրմնջում... Երկրորդ անգամ լսուեց դրան բաղխիւնն ու Ակվիլան սթափուած իւր սառած դրութիւնից՝ բարձրաձայն բացականչեց։

—Պրիսցիլա... տալով այդ անունը նա բարձրացրեց աջ ձեռքը, կարծես ցոյց տալով երկինքը, յետոյ վճռաբար մօտեցաւ դրանն ու անձամբ բացեց։

Բանալով դուռն իսկոյն երկու քայլ յետ կնաց, լայն բանալով իւր աշքերը...

Նրա առաջ կանգնած էր ներսնի թիկնապահներից մինը փայլուն հագուստներով, նրա գլխին գրուած էր գայլի գլխից պատրաստուած սաղաւարտ, իսկ սաղաւարտի տակից ցած էին թափուած նրա շէկ, գրեթէ գեղնագոյն մազերը։

Ակվիլան երբէք չէր տեսել մի այդպիսի հսկայի...

Տիրեց խորին լռութիւն...

Անծանօթի աշքերը ոչ պակաս զարմաց։ մամբ նայում էին ծերունուն։ Նրա հայեացը ի մէջ կարգացւում էր մի ինչ որ հարց, մի ինչ որ տարակուսանք։ Վերջապէս նա ծոռւելով ոտք դրեց շէմքը և ներս մտաւ սենեակ։

Միայն այժմ նկատեց Պրիսցիլային, որ գեռ ծնկաշոր ազօթում էր սեղմելով շրթունքներին փայտեայ խաչը։

Զինուարը արձանացած կանգ առաւ, նրա դէմքը ծածկուեցաւ մահուան դեղնութեամբ, նա մի փախեցած հայեացը ձգեց այդ տարի քաւոր կնոջ վրայ։

—Կախսարդութիւն մի անի... բացականչեց զինուարը ծածկելով երեսը իւր ձեռքերով։

Պրիսցիլան կամեցաւ աշքերը բարձրացնել...

Ժեց գլուխը աւելի մօտենալով իւր ամուսնուն։

Այսպէս, նրանք նստած մնացին մի առ ժամանակ կարծես սպասելով թէ երբ պիտի խփէ վերջին ժամը...

Յանկարծ ծանր բայլերի ձայներ լսուեցան։ Ոք մինի ձեռք բռնեց դրան կօճակն ու շարժեց։ Բայց դուռը փակուած էր և չըբացուեց։ Այն ժամանակ ձեռքի ափով բաղխեցին դուռը... Ամուսիններն ակամայից վեր թռան տեղից ու գունատուեցին։ Դրան յետեւ կանդնած էր մահը։

Պրիսցիլան կօրցրեց արիութիւնը։ Նա ընկաւ ծնկների վրայ, դուրս բաշեց բարձի տակից փայտեայ խաչը, սեղմեց իւր ձեռքերի մէջ ու մօտեցրեց դէմքին... Այդ ժամանակ նրա շրթունքներն ազօթք էին մրմնջում... Երկրորդ անգամ լսուեց դրան բաղխիւնն ու Ակվիլան սթափուած իւր սառած դրութիւնից՝ բարձրաձայն բացականչեց։

—Պրիսցիլա... տալով այդ անունը նա բարձրացրեց աջ ձեռքը, կարծես ցոյց տալով երկինքը, յետոյ վճռաբար մօտեցաւ դրանն ու անձամբ բացեց։

Յանալով դուռն իսկոյն երկու քայլ յետ կնաց, լայն բանալով իւր աշքերը...

Նրա առաջ կանգնած էր ներոնի թիկնապահներից մինը փայլուն հագուստներով, նրա գլխին գրուած էր գայլի գլխից պատրաստուած սաղաւարտ, իսկ սաղաւարտի տակից ցած էին թափուած նրա չէկ, գրեթէ գեղնագոյն մազերը։

Ակվիլան երբէք չէր տեսել մի այդպիսի հսկայի...։

Տիրեց խորին լռութիւն...։

Անձանօթի աշքերը ոչ պակաս զարմացմամբ նայում էին ծերունուն։ Նրա հայեացըի մէջ կարգացւում էր մի ինչ որ հարց, մի ինչ որ տարակուսանիք։ Վերջապէս նա ծոռելով ոտք դրեց շէմքը և ներս մտաւ սենեակ։

Միայն այժմ նկատեց Պրիսցիլային, որ գեռ ծնկաչոր ազօթում էր սեղմելով շրթունքներին փայտեայ խաչը։

Զինուորը արձանացած կանգ առաւ, նրա դէմքը ծածկուեցաւ մահուան գեղնութեամբ, նա մի փախեցած հայեացը ձգեց այդ տարիքաւոր ինոչ վրայ։

—Կախարդութիւն մի անի... բացականչեց զինուորը ծածկելով երեսը իւր ձեռքերով։

Պրիսցիլան կամեցաւ աշքերը բարձրացնել...

— Ասա՞ նրան, որ կախարդութիւն չանի,  
կրկնեց զինուորը դիմելով Ակվիլյան:

Ասելով այս, ծածկած դէմքով նա դէպի  
պատը բաշուեց. վախենալով թէ մի գուցէ այդ  
կուջ կախարդութիւնը իւր աշըլ մտնի, կամ  
իրեն որևէ վնաս պատճառէ:

Ծերունիները վախեցած իրար էին նա-  
յում: Նրանք սպասում էին, որ ահա հսկան կը  
յարձակուի իրենց վրայ, կըկապի և գուցէ տեղն  
ու տեղը սպանի: Բայց հսկան կանգնած էր  
անշարժ, կաբծես ինքն էլ վախենում էր իւր  
գոհերից:

Ակվիլան ոկտեց մեղմաբար խօսել:

— Հանկստացիր, եղբայր, ասաց նա, այս  
կինը ոչ մի վնաս չի տայ, սա կախարդ չէ:

Զինուորը շտապ ցած թողեց ձեռքերը:  
Նրա աշքերը տարակուսանքով նայում էին ա-  
մուսիններից մերթ մէկին, մերթ միւսին:

Ուրեմն գուք կախարդ չէք, հարցրեց նա:

— Ոչ, մենք կախարդ չենք, պատասխա-  
նեց Ակվիլան հաղիւ նկատելի ժպիտով:

— Բայց չէ որ գուք քրիստոնեաններ էր...

Վերջապէս տրուեց սարսափելի հարցը:

Ծերունին խոնարհեցրեց գլուխը:

— Այն, մենք քրիստոնեաններ ենք, շնչաց  
ծերունին, համոզուած լինելով որ իւր պա-

տասխանին հետեւելու է մահուան հարուածը:

Բայց ոչինչ չսկատահեց:

Երբ ծերունին վճռեց բարձրացնել տշ-  
քերը, այդ ժամանակ անծանօթը նոյն տեղում  
կանգնած նայում էր նրան դարձեալ նոյն զար-  
մացած ու հարցական հայեացրով:

Յետոյ նա առաջ անցնելով կանգնեց սե-  
նեակի մէջտեղը և վերցնելով վայտեայ աթոռը՝  
նստեց վրան: Նա վերցրեց զլիսից իւր գայլի  
զլիսի սաղաւարտը, դրեց իւր կողքին և աշքե-  
րը խոնարհեցնելով դէպի յատակը՝ մնաց այդ  
գրութեան մէջ...

Տիրեց մեռելային լուսթիւն:

Ակվիլան և կինը հետաքրքրութեամբ նա-  
յում էին այդ տարօրինակ այցելուին. Նրանք  
իրենց կիսանորում չէին պատահել այդպիսի  
մարդու:

Այժմ, երբ նա վերցրել էր զլիսից սաղա-  
ւարտը, նկատելի եղաւ, որ միայն դէմքն էր  
չոռվմի արեփ աղդեցութիւնից այրուել... Նրա  
ճակատը, որպէս մի օրիսրդի ճակատ մնացել  
էր ճերմակ ու քնքոյշ... Նրա մազերի այն մա-  
սը, որ ենթարկուած էր արեփ, անձրեփ ու քա-  
մու աղդեցութեանը, կոշտացել ու գծուել  
էր... Մակայն սաղաւարտով ծածկուած մասը

թաւշի նման պահել էր իւր փափկութիւնն ու  
նրբութիւնը:

Գերման երխտասարդի դէմքի գծագրու-  
թիւնը կանոնաւոր էր ու գեղեցիկ: Նա մօրուք  
չունէր, մինչև անզամ աղուամազի հետք էլ չէր  
երեսում: Նրա դէմքի վրայ ընկած միակ ստուե-  
րը, նրա թախծալից արտայայտութիւնն էր:

Ակվիլան նորից մօտեցաւ մահճակալին ու  
նստեց վրան: Նա չէր կարողանում իւր աշքե-  
րը հեռացնել օտարականից... Ի՞նչ մարդ է  
սա, ինչ է կամենում... ով է սա... խուզար-  
կմւ... դահիճ...

Բայց նա դահճի նման չէր:

Զինուորը ձեռքն երկարացրեց դէպի խաչը,  
որից գեռ չէր բաժանուել Պրիսցիլլան:

— Ճնոր տեսնեմ... տսաց նա:

Պրիսցիլլան դժուարացաւ:

Այն ժամանակ Ակվիլան բարձրացաւ տե-  
ղից, կնոջ ձեռքից առաւ խաչը և զինուորին  
տուեց:

Զինուորը կոթից բռնած, գրեց խաչը իւր  
աջ ծնկան վրայ և սկսեց մտախոհ նայել:

Յետոյ նա գրեց իւր ձախ ձեռքը խաչի  
ընդմիջող մասի վրայ...

— Ահա, այստեղ էին կապուած նրա ձեռ-  
քերը... վնդինթաց նա...

Նա կարծես մոռացաւ, որ սենեակում  
մարդ կայ: Նրա աշքերը ուղղուեցան դէպի հե-  
ռուն: կարծես այնտեղ նրա առաջ նկարուում էր  
մի ինչ որ պատկեր...

Յանկարծ նա գարձրեց իւր գլուխը դէպի  
Ակվիլան: Նրա աշքերի մէջ վառուում էր մի ինչ  
որ հարց: Բայց նա նկատելով որ գուռը բաց  
էր մնացել, նշան տուեց ծերունուն, որ գուռը  
փակէ:

Ակվիլան հնազանդուեց:

Զինուորը ձգեց իւր ձեռքն ու բաշեց ծե-  
րունուն իւր մօտ: Ծերունուն մի բոպէ թուաց,  
որ իւր ձեռքը առիւծի թաթի մէջ է զտնուում:

Զինուորը նստած տեղից աշքերը վեր  
բարձրացրեց և նայեց ուղիղ ծերունու աշքե-  
րին:

— Ճշմարիտ է, ասաց նա ճնշուած ձայ-  
նով, որ մարդիկ մահից յետոյ էլ կարող են  
ապրել:

Պրիստոնեայ ծերունու աշքերը փայլեցին:

— Այն, ճշմարիտ է, ասաց նա բարձր ու  
հաստատ ձայնով. կարող են՝ եթէ միայն հա-  
ւատան նրան, որ յաղթեց մահը:

Զինուորը որպէս թէ չըհասկանալով, լուռ-  
թեամբ լուռմ էր:

Ծերունին նկատեց այդ:

— Տեսնում ես, ասաց նա, առաջ այդպէս չէր: Մարդիկ երբ մեռնում էին, բոլորովին մեռնում էին: Բայց յետոյ երեւեցաւ մի Մարդ, որ մարդկանց աղատեց մահից:

Զինուորը բայց շխոնելով ծերունու ձեռքերը, զլխով արեց, որպէս թէ հրաւիրելով նըրան շարունակել:

— Առաջ, շարունակեց ոստայնանկին իւր բարողը, ծէրը մարդկանց վրայ բարկանալով, (Սստուած մէկ է և չկան շատ աստուածներ, ինչպէս այդ Հռովմայեցիքն են կարծում), որովհետեւ մարդիկ միայն իրենց մարմնի համար էին աշխատում և ոչ հոգու, այդ պատճառով էլ Սստուած այնպէս կարգադրեց, որ կեանը մարմնի կեանքի հետ ի միասին վեր ջանայ... Բայց յետոյ եկաւ նրա Որդին և ասաց. — «Հայր, ինձ թւում է թէ մարդիկ չար չեն, այլ միայն անմիտ, ուստի, ես ինքս կը-մարդկանամ ու ինձ վրայ կառնեմ նրանց բոլոր բեռը և երբ ես նորից կըվերադառնամ, կը-պատմեմ Քեզ, թէ որքան իրաւացի էին խօսքերս, մարդկանց համարելով անմիտ, բայց նշ չար: Եւ եթէ այդպէս եղաւ, այն ժամանակ Դու ինձ պիտի խոստանաս, որ այնունետեւ զը-թալու ես մարդկանց և նրանք պիտի չըմեռնին իրենց մարմնի հետ, այլ ապրեն յաւիտեան»:

Ծերունին մի բոպէ կանգ առաւ, կամե-նալով տեսնել իւր խօսքերի ազգեցութիւնը, որոնց նա զիտմամբ այդքան պարզ և դիւր-լմբոնելի ձև տուեց:

Ճիկահեր վայրենին նշ մի խօսք չասաց:

— Եւ երեակայիր, շարունակեց ոստայ-նանկիր, որ այս հրաշքների հրաշքը խկապէս կատարուեց: Նա, յիրաւի, ինչպէս մարդ ապրեց մարդկանց մէջ... Եւ երեակայիր—այստեղ ծե-րունին յածացրեց իւր ձայնը և արդէն ոկսեց շնչալ—երեակայիր, որ գեռ ևս կան այնպիսի ծերունիներ, որոնք նրան տեսել են: Նա թոյլ տուեց, որ իրեն սպանեն և նորից յարութիւն առաւ և երեցաւ իրեն ճանաչող մարդկանց, որպէսզի նրանք իրականապէս համոզուեն, որ թէ և մեռաւ՝ բայց կենդանի է: Ահա այսպէս կըլինի և մեզ ամենիս—նրան հաւատացողնե-րիս համար... Մենք բոլորս մեր մահից յետոյ յարութիւն կառնենք...

Այդպէս սովորեցրեց նա մեզ և այդպէս էլ կըլինի... Այս այդպէս էլ կըլինի...

Ծերունին արդէն ցնծալի ձայնով էր խօ-սում:

Զինուորը նայեց նրան ու տեսաւ նրա եր-ջանիկ արտասուրներով լի փայլուն աշքերը:

— Այդ միենոյն խօսքերը նա էլ էր ասում,  
ասաց զինուորը վլուխը շարժելով:

Ակվիլան չըհասկացաւ թէ ում մասին էր  
խօսում: Բայց չկարողացաւ նրան նոր հարցեր  
տալ:

Զինուորը նորից մտածմունքի մէջ ըն-  
կաւ... Տիրեց բովէական լուսվիւն:

Յանկարծ զինուորի տեսրը կարմրեց և  
կարծես վճռեց համոզուել խոստովանուելու իւր  
մտքերը և աւելի պինդ սեղմելով ծերունու  
ձեռքերը բացականչեց խոսպոտ ձայնով.

— Եւ դու կարծնամ ես... որ Կլաւդիան  
կենդանի է...

— Կլաւդիան... բացականչեց ծերունին  
յետ-յետ գնալով:

Այդ հարցը նրա համար միանգամայն ան-  
սպասելի էր:

Գերման զինուորը պինդ բռնեց նրա եր-  
կու ձեռքից, կարծես վախենալով որ նա կա-  
ռող է փախչել իւր ձեռքից... Նա դամեց իւր  
աշքերը ոստայնանկի աշքերին, սպասելով նրա  
պատասխանին... Այդ վայրկենին նա այնպիսի  
արտայայտութիւն ընդունեց, որ կարծես ծե-  
րունու տուած պատասխանից պիտի կախուած  
լինէր նրա կեանքն ու մահը...

— Դու միթէ նրան չես ճանաչում... Դու

պիտի ճանաչես նրան... Նա ուղարկեց ինձ  
քեզ մօտ...

— Նա ուղարկեց քեզ... ինձ մօտ... թո-  
թովեց Ակվիլան:

Զինուորը անսահման անհամբերութեամբ  
բորբորուած թափանարեց ծերունուն...

— Երդեօր կենդանի՞ է Կլաւդիան... կեն-  
դանի՞ է Կլաւդիան... կենդանի՞ է Կլաւդիան...  
բացականչեց նա երեք անգամ սիրաբորբոր  
ձայնով:

Ակվիլան ուժով դուրս քաշեց իւր ձեռ-  
քերը նրա ձեռքերից և հանդիսաւոր կերպով  
բարձրացրեց դէպի երկինք:

— Ենապէս ճշմարիտ է այդ, ինչպէս որ  
ես կանգնած եմ քո առաջ. Կլաւդիան, որ ե-  
րեկ մարտիրոսական մահ ընդունեց խարոյկի  
վրայ՝ մեռած չէ... Նա կենդանի է... և պի-  
տի ասլրի այսօր, վաղը... յաւիտեան...

Սենեակի մէջ մի սարսափելի ճիշ լսուե-  
ցաւ... Հոկան վեր թռաւ տեղից և վայրենի  
արտայայտութեամբ կանգ առաւ սենեակի մէջ  
տեղը... յետոյ յարձակուեցաւ Ակվիլայի վրայ,  
բռնեց նրա ուսերից մի այնպիսի ուժով, որ  
քայլայտուած ու տկար ծերունին, սկսեց ծո-  
տի նման տատանուել նրա ձեռքերի մէջ:

— Ես կամենում եմ գնալ նրա մօտ... ա-

դաղակեց նա... ցոյց տուր ինձ ճանապարհը...  
դու կարող ես ցոյց տալ... նա չինքն ասաց  
ինձ այդ...»

Պրիսցիլան երկրպավ մօտեցաւ նրան.

— Օտարական, շնչաց նա, զգուշութեամբ  
բռնելով նրա ձեռքը, մի վնասիր ամուսնուս:

Զինուորն խօսյն ցած թողեց ձեռքերը,  
ըստ երեսւթին կնոջ մեզմ ձայնը նրան աղ.  
դեց ու հանդստացրեց:

— Մենք Կլաւդիային խիստ էինք սիրում,  
— շարունակեց Պրիսցիլան, ասա մեզ, որտե-  
ղից ես ճանաշում նրան... ինչ դիտես նրա  
մասին:

Զինուորը ինչ որ վնթվնթաց, յետ  
քաշուեց ու նստեց աթոռի վրայ: Նա իւր  
գլուխը խոնարհեցրեց և ընկաւ մտածմունքի  
մէջ, երեսւմ էր որ մի ինչ որ յիշողութիւն  
տանջում, ցնցում էր նրա ամբողջ կազմուածքը:

Նա կամեցաւ խօսել, բայց չկարողացաւ:  
Միայն դրա փոխարէն մի հառաջանք գուրս  
թռաւ կրծքից, նա աւելի կորացրեց իւր գլու-  
խը, գրեթէ մօտեցրեց ծնկներին և ձեռքի  
բռնցքներով սկսեց սեղմել աշքերը:

Ակվիլան և նրա կինը թէկ վառուած ան-  
համբերութեամբ, բայց և լուսթեամբ սպասում  
էին... երեսւմ էր որ այդ մարդը տեսած էր

Կլաւդիային, երբ նրան պատժելու էին տա-  
նում և ծերունիները սկսեցին մի ինչ որ ջեր-  
մեռանդ սարսափով նայել հիւրին:

Նրա յուզուած ճառը ցոյց էր տալիս, որ  
նա մօտիկ է եղել Կլաւդիային նրա վերջին  
բարձրէների ժամանակ, որ նա խօսել է նրա  
հետ և շատ կարելի է ընդունել է նրա վեր-  
ջին հառաջանրը:

Այդ վայրկեանից Կլաւդիան, մթին կատա-  
կոմբների այդ գեղեցիկ լոյսը, քրիստոնեայ  
համայնքի այդ սիրոյ կապը, որ հեռանալով  
իւր աղնուատոհմ ընտանիքից ինքնակամ նուի-  
րեց իւր գեռափիթիթ կեանքը, որպէս զի մաս-  
նակից լինի այդ խեղճերի ու արհամարհուած-  
ների վիճակին, նրանց յիշողութեան մէջ դար-  
ձաւ մի սրբութիւն...

Տեսնելով որ զինուորը չափազանց յու-  
զուած է, Ալլիլան նրան կապով պատմել տա-  
լու նպատակով փորձեց հարցեր տալ: Ծերու-  
նին մօտեցաւ և ձեռքը դնելով նրա ուսին  
տաց:

— Դու, որպէս կայսեր թիկնապահ, նշա-  
նակում է երէկ երեկոյ այնտեղ պիտի եղած  
լինէիր...

Զինուորը աշքերը բարձրացրեց և ի նշան  
հաւանութեան շարժեց զլուխը:

— Երբ... գիշերացաւ... ասաց զինուորը  
խօսքերը դժուարութեամբ արտասանելով, —  
մեղ տարան ներոնի այգիները...

Մեղ ասացին, որ քրիստոնեաները պիտի  
այրուեն, որովհետև նրանք են հրդեհել չռովմը...  
Նա լռեց նորից:

— Եւ դու ամեն բան տեսած, հարցրեց  
Ակվիլան:

Զինուորը նորից շարժեց իւր գլուխը:

— Եյտեղ, ուր մեղ տարան, ծառուղու  
նման, յիսուն ռայլ լայնութեամբ, իրար դիմաց,  
երկկարգ կանգնեցրած էին բազմաթիւ սիւներ:  
Մեղ ասացին, որ կայսրը կըշրջէ սիւների մի-  
ջանցրով մինչև որ...

— Մինչև որ... ի՞նչ:

— Մինչև որ քրիստոնեաներն այրուեն:

— Եւ դուք պիտի հետեւիք կայսեր...

— Ոչ, մենք պիտի կանգնէինք սիւների  
մօտ, իւրաքանչիւրս մի սիւնի մօտ ե կրակ  
տայինք սիւները շրջապատող ցախը...

— Եւ հարկաւորուեցած այդ բանի համար,  
ակամայից հարցրեց Պրիսցիլան:

Զինուորը նայեց նրան ու բարձրացրեց  
ուսերը: - Շատ կարելի է կայսրը վախենում  
էր, որ քրիստոնեաները իրեն մի բան կանեն...  
չէ որ նա շատ վախկոտ է:

Գերման զինուորի շրթունքների վրայ ե-  
րեցաւ մի հեգնական ժպիտ: Նա դարձրեց  
գլուխը...

— Երեկ սիւներից մինն էլ քեզ յահնե-  
ցին... համար շարունակեց Ակվիլան իւր հարց  
ու փորձը:

Զինուորը ոչինչ չպատասխանեց:

— Այն ամենից յետոյ, խօսեց վերջապէս  
զինուորը մռայլ ձայնով, որ ես լսել էի քրիս-  
տոնեաների մասին, կարծում էի, որ դրանք  
մարդասպաններ ու աւագակներ են... բայց...  
երբ մօտեցայ սիւնին... Նրա վրայ կապուած  
էր մի կին... այն, կին:

Սենեակում տիրեց մեռելային լռութիւն...

Զինուորի դէմքի վրայ երեցաւ մի ժը-  
պիտ...

— Ի հարկէ նա այն հրձիկներից չէր, ա-  
սաց նա ու ամաչեց...

— Նրանք գրիթէ ամեն բան հանել էին  
նրա վրայից, — շարունակեց զինուորը... Նրա  
շորերն ու կօշիկները ընկած էին սիւնի տակ  
գետնի վրայ, նրա շորերից ու կօշիկներից կա-  
րելի էր իմանալ, որ նա պատկանում էր մի  
աղնուատոհմ ընտանիքի: Եւ նա կախուած էր  
իմ առաջ... այնպէս... մերկ...

Զինուորն յանկարծ սեղմեց բռունցքներն  
ու թափահարեց գլուխը:

— Ո՞հ... ինչավէս թոյլ տուին իրենց մի  
կնոջ հետ այդպէս վարուելու... Եթէ ցախէրն  
ու փշենին չէին եղել, որոնք ծածկում էին  
նրան մինչև պարանոցը... այն ժամանակ պի-  
տի...

Եւ իսկոյն լռեց, նրա ամօթխած հոգին  
յուզուեցաւ:

— Ո՞հ... ինչպիսի մարդիկ են այդ հոգվ-  
մայեցիները... փնթփնթաց նա... Յետոյ մօ-  
տեցաւ ինձ չոռվմի հարիւրապետը ջահը ձեռ-  
քին, տուեց ինձ այդ ջահն ու ասաց... «Լը-  
սիր, երբ կըմթնի և կայսրը կըպայ այդին,  
դու կըլսես հրաման՝ վառեցէք... իսկոյն ջա-  
հը կըմօտեցնես փշենուն, ահա այստեղ – տա-  
կը, որտեղ թաթախուած է ձիւթով, որպէս  
զի շուտով բորբոքուի»: Հարիւրապետն այդ  
խօսքերն այնպէս լսելի ձայնով ասաց, որ այն  
կինը պարզ կերպով կարող էր լսել, թէ ի՞նչ  
է սպասում իրեն:

Երբ հարիւրապետը հեռացաւ, ես նայեցի  
նրա դէմքին... առաջ ես չէի նայում նրան,  
կարծելով թէ նրա վրայ մահուան երկիւղ կը  
տեսնեմ... բայց երբ նայեցի նրան... և նա  
ինձ... ուրիշ բան տեսայ միանդամայն...

Վերջին բառերը նա շշնչալով արտասա-  
նեց:

Զինուորը պատրաստ էր նորից լռել, բայց  
անհամբեր ամուսինները նրան թոյլ չտուին...

— Ի՞նչ էր արտայայտում նրա դէմքը... ի՞նչ  
նկատեցիր նրա դէմքի վրայ, հարցրեց Ալիկի-  
լան, մեղմութեամբ թափահարելով նրա ուսը,  
կարծես կամենալով արթնացնել նրան:

— Գրեթէ ցնծութիւն... ասաց զինուորն  
ու սկսեց սրբել խր ճակատը: — Ես չեմ կարո-  
դանում պատմել այն...

Եւ յիրաւի երեսում էր, որ նա աշխատում  
էր մի հնար գտնելու, որպէսզի կարողանար ար-  
տայայտել այն ամենը, ինչ որ նրան այդպէս  
զարմացրել ու ապշեցրել էր...

— Նա նայում էր այն մանկան նման, շա-  
րունակեց զինուորը, որը սպասում է մի բանի  
և կամենում է որ այդ բանը որքան կարելի է  
շուտ լինի... նա ամենդհատ նայում էր ինձ...  
և ես նրան... ես սկսեցի խղճահարուել և հար-  
ցրի. «Ի՞նչի՞ ես ինձ այդպէս նայում»: Նա սկսեց  
խօսել... «Այն պատճառով եմ քեզ նայում, պա-  
տասխանեց նա, որ իմանամ թէ ով պիտի բա-  
նայ ինձ համար գրախտի գուռը»:

— Ի՞նչ բան է այդ գրախտը, հարցրի ես  
չհասկանալով նրա ասածը:

— Մի այդի է... և այնպիսի գեղեցիկ այդի, որպիսին դու չես տեսել և չես էլ տեսնի երբէք երկրիս վրայ։ Այնտեղ յաւիտենական ծաղկած մարգագետիններ և ստուերաշատ ծառեր կան... Այնտեղ չկայ նշ ձմերային սառնամանիք և նշ ամարային տապ ու տօթ... Եւ եթէ դու այնտեղ, հազար տարի և դարձեալ հազար տարի շրջելու լինիս, երբէք չես կարող այգու ժայրին հասնել։

Այդ այգու մէջ ապրում են այնպիսի էակներ, որոնց նմանը դու ոչ մի տեղ չես տեսել... Նրանք պատանիների են նման, միայն ուսերին ճերմակ թերե ունին... այս, մեծ... ճերմակ թերե... Նրանք այնտեղ աղաւնիների նըման կամ առանձին — առանձին և կամ խմբերով յետ ու առաջ են թռչում...»։

Որովհետև չէի հասկանում նրա ասածները, սկզբում կարծեցի թէ նա կամ զառահցում է և կամ մահուան երկիւզից խելքը կորցրել է... բայց երբ նորից բարձրացրի աշքերս ու նայեցի նրան, համոզուեցայ, որ խելքը գլխին է։

— Բայց նրտեղ է այն այգին, որի մասին խօսում ես, հարցը ես։

Նա որքան կարողացաւ յետ ձգեց գլուխը և նայեց երկնքին։

Այդ րոպէին նոր էր դուրս եկել գիշերային աստղը։

— Այնտեղ է... վերսում, պատասխանեց կինը։ Տեսնում ես, այժմ միայն մի աստղ է երեսում, բայց շուտով կըշտամանան, կըշտամանան անթիւ բանակութեամբ և կըլուսաւորեն ու կըփայլեցնեն երկինքը։ Ահա, այդ անթիւ ու անհամար աստղերի, այդ բոլոր լուսոյ ու փայլի վերին է գտնւում իմ ասած այգին։ Եւ երբ մեռնեմ, այնտեղից բազմաթիւ հրեշտակներ կիջնեն, կը բռնեն ձեռքիցս ու կըթուցնեն երկինք... Այս, այսօր երեկոյեան նրանց հետ ի միասին այն հրաշալի, այն սքանչելի այգում կըլինեմ...»

Զինուորը լոեց, յետոյ նորից վերցրեց փորիկ խաչը, որ առաջ վայր էր ընկել ձեռքից ու վերցրել էր Պրիսցիլլան։

Ահա այստեղ էին կապուած նրա ձեռքերը, — շարունակեց զինուորը։ Եւ խօսելու ժամանակ, երբ նա շարժում էր իւր ճերմակ ձեռքերը, ինձ թւում էր, որ նա ուսերի վրայ երկու ճերմակ թերե ունէր ու այն թերեով իսկոյն կամհնում էր թռչել երկինք... Ես անընդհատ նայում էի նրան ու չէի կարողանում աշքերս հեռացնել... այս, անընդհատ նայում էի... մինչեւ որը...

Եւ իսկոյն նրա գլուխը խօնարհեց... նա

սկսեց հետզիւտէ կորանալ ու կորանալ... և  
վերջը ահագին կծիկի նման օրօրուեց այս ու  
այն կողմը... Այդ ժամանակ նրա շիկագոյն մա-  
զերի հիւսուածքները սկսեցին աջ ու ձախ փը.  
ուուել... յանկարծ այդ մսեղէն զանգուածը ըս-  
կսեց հեծկլտալ ու սպալ... նա այդ բոպէին  
նման էր խիտ անտառից դուրս փախչող ա-  
րիւնաշաղախ վիրաւոր դապանի...

Անցաւ մի առ ժամանակ և հոկան սկսեց  
փորր առ փորր հանդարտուել... վերջը նա ըլտ-  
կուեց և կարծես սթափուելով՝ շարունակեց.

— Թէի նա լսել էր հարիւրապետի խօս-  
քերը և տեսել այն բոլոր պատրաստութիւն-  
ները, սակայն նկատելով՝ նրա ուրախ տրամա-  
դրութիւնը՝ հարցը.

— Միթէ չես վախենում այն բանից, որ  
սպասում է քեզ:

Այդ ժամանակ զինուորն աշքերը չուած,  
նախ Ակվիլային նայեց և ապա նրա կնոջը, կար-  
ծես նա կամենում էր նրանց վկայ կոչել այն  
բանի, որի մասին նա իսկոյն պիտի պատմէր:  
— Իմ հարցիս նա միայն ծիծագով պա-  
տասխանեց:

— Նա ծիծագեց, բացականչեց Ակվիլան  
ու նայեց իւր կնոջը:

Պրիսցիլլան լուութեամբ շարժեց գլուխը:

— Այն, շարունակեց զինուորը, նա ծիծա-  
գեց, ոչ թէ բարձր ձայնով, այլ այնպէս, ինքն  
իրեն, նման այն մարդու՝ որ իւր սրտում ցըն-  
ծութիւն է զգում: — Այն, նա ծիծագեց ու ա-  
սաց. «Ո՞հ, եղբայր, եթէ իմանայիր թէ սիրտս  
ինչպէս է ցնծում, չվախենալուս վրայ չէիր զար-  
մանայ: Գիտես... որ մի ժամից յետոյ ես կը-  
լինիմ նրա մօտ, Որին մինչև օրս ձգտել է հո-  
գիս...

— Ո՞ւմ մասին ես խօսում, հարցը ես,  
դարձեալ ոչինչ չհասկանալով:

— Այն այգու Տիրոջ, որի մասին ես քեզ  
պատմեցի: Նրա մասին, որ եկաւ աշխարհ և  
ոչնչացրեց մահը... Այժմ մարդիկ մահից յե-  
տոյ, մեռած չեն մնայ՝ այլ նորից յարութիւն  
կառնեն... Գու երբ և իցէ Յիսուսի մասին ո-  
չինչ չես լսել:

Այն ժամանակ նա, որրան ներում էին  
ձեռքի կապերը, դէպի ինձ խոնարհեց: Ես ար-  
դէն զգում էի նրա չնշառութիւնը... նրա աշ-  
քերը մօտ էին աշքերիս... խիստ մօտ էին ..

— Այս, եղբայր, չչնջագ նա, եթէ գու կա-  
րողանայիր կատարել ասելիրս, որրան երջանիկ  
կըլինէիր: Լսիր, երբ ես մեռնեմ, գնա ոստայ-  
նանկ Ակվիլայի մօտ. նա բնակում է բազա-  
րից դուրս Ապահան ճանապարհի վրայ, չոր-

բորդ մղոնանիշ քարի մօտ: Գնա նրա մօտ և ասա, որ քեզ կլաւդիան է ուղարկել: Թող նա պատմէ քեզ Յիսուսի մասին, մկրտէ քեզ և մեր համայնքում ընդունէ, որպէսզի գու էլ մեզ նըման երջանիկ լինիս:

Ակվիլան զսպած ձայնով ընկաւ զինուորի վրայ, փաթաթուեց նրա պարանոցովը և ըսկեց ջերմ համբոյրներ տալ:

— Եղբայր իմ, բացականչեց նա, սիրելի եղբայր...

Պրիսցիլան զինուորի մօտ ծունկ չոգեց և սկսեց փայփայել նրա ձեռքերը... երբ փայփայանքներն ու զգուանքները վերջացան, նորահաւատը շարունակեց.

— Երբ ես չկարողացայ հասկանալ, թէ ինչի նա ինձ իւր եղբայր անուանեց՝ հարցրի:

— Դու մի յայտնի կին ես, իսկ ես մի հասարակ զինուոր, մինչև անզամ ոչ հոռվմայեցի, ինչի ես ինձ եղբայր անուանում:

Նա առաջուան նման ժպտաց ու ասաց.

— Դու եղբայրս ես, իսկ ես ըոյրդ: Ամենիս էլ միայն մի չայլ ունինք, Որը երկնքումն է բնակւում, այն գեղեցիկ այգու մէջ: Մենք գիտենք այդ. իսկ հոռվմայեցիները շփխեն և այդէ պատճառը որ մենք նրանցից աւելի բաղդաւոր ենք, այն, աւելի բաղդաւոր: Երբ մենք պա-

տահում ենք իրար փողոցում, ասում ենք. «Սիրում եմ քեզ, եղբայրս»:

Եւ մենք որտեղ էլ լինինք, միշտ մեր չուրցը մեղմ երգերի, կարծես գեղեցիկ երաժշտութեան ձայներ ենք լսում. Եւ դիտես ինչի, որովհետեւ մեզ շրջապատող օգը ոչ թէ դատարկ է, ինչպէս այդ կարծում են հոռվմայեցիր, այլ լցուած է հազարաւոր անտեսանելի հոգիներով, որոնք միշտ մեզ հետ են, բայց որոնց չենք կարող տեսնել, քանի որ մեր հոգիները բնակւում են մեր հողանիւթ մարմինների մէջ: Բայց հէնց որ ձգենք մեղանից այդ մարմինը, մենք միանգամից պիտի ճանաչենք ու զգանք, թէ որքան հարուստ է Աստուծոյ աշխարհը... որքան հրաշալի է և որքան սքանչելի...

Ասելով այս նա շարժեց ձեռքերը և կարծես ուզում էր ազատուել կապանքներից ու զբրկել ինձ... Ես նայեցի նրա աշքերին և ամեն բան փոխուեց աշքիս. կարծես ես նրա բոլոր ասածները հասկացայ... այդ բոպէից մեզ շրջապատող իրերին արդէն ուրիշ աշքով սկսեցի նայել...

— Եթէ գնամ Ակվիլայի մօտ և քեզ նման քրիստոնեայ լինիմ, կարմղ եմ արգեօք գալ այն այգին, ուր որ գու ես պնում, հարցրի նրանից:

— Այն... այն... այն, պատասխանեց նա ժպտալով:

— Եւ երբ զամ այնտեղ, դու ինձ կըճանաշե՞ս... չես հեռանալ ինձանից...

Նա գլուխը շարժեց ու ժպտաց:

— Ես քեզ այգու դռների մօտ կըսպասեմ... գալուդ ժամանակ կընդպառաշեմ քեզ և ձեռքիցդ բանած այգին կըմտցնեմ: Ճնշտ կըդասայնտեղ...

Ես այդ ժամանակ փորձեցի նրան գրկել, բայց փշենին արգելեց...

— Կըդամ քեզ մօտ, հէնց որ կարելի լինի, պատասխանեցի ես, և ամհնեին չեմ հեռանայ քեզանից... յաւիտեան քեզ մօտ կըլինեմ... այն, յաւիտեան...

Մինչդեռ մենք խօսում էինք, յանկարծ չորս կողման ազմուկ բարձրացաւ և լսեցի այգու ստորին ծայրից սարսափելի հրամանը «Վառեցէք, վառեցէք...»:

Անշուշտ այդ հրամանն աւելի շուտ էր արձակուած, սակայն մենք չէինք լսել, որովհետեւ միւս խարոյվներն արդէն բորբոքում էին՝ սոսկալի բոցեր արձակելով:

Հանդիսատես հռովմայեցիները վայրենի գաղանեների նման սկսել էին հրճուանից ազակել ու ոռնալ... իսկ բրիստոնեաները, այ-

րուող սիւների վրայից բարձրացնելով իրենց գլխները դէպի երկինք, աղաղակում էին մի ինչ որ բան, որ թէս ես չհասակցայ, բայց նկատեցի որ ամենն էլ նոյն բառն էին աղաղակում:

Սներեակայելի ազմուկ բարձրացաւ եկաւ նաև կայսրը, ութը ձիանոց ոսկեայ կառքի մէջ նստած:

Պլաւդիան տեսնելով որ ես արձանացած կանգնած եմ, աղաղակեց.

— Եղբայր, ինչի՞ չես վառում... ժամանակ է, վառիր...

Ես յիշեցի հարիւրապետի հրամանը և կամենում էի ջահը փշենուն մօտեցնել... բայց... չկարողացայ... Ան ինչ կայսեր կառքն արդէն մօտենում էր...

— Ջտապիր, եղբայր, ինչի՞ ես ուշացնում, միթէ չես լսում, որ եղբայրներս «Ովսաննա» են աղաղակում: Միթէ չես տեսնում, որ նրանք երկինք են թռչում: Միթէ միայն ես պիտի զրկուեմ այն այգսւց... միայն ես... ասաց Պլաւդիան կրկին անգամ զիմելով ինձ:

Երեսս գարձրի, որպէս զի չտեսնեմ նրան, վերցրի ջահը և համաձայն հարիւրապետի հրահանգի, մօտեցրի փշենուն... հազիւ կարողացել էի մօտեցնել ջահը, երբ յանկարծ բռնկեց կրակը... կատաղի բոցերը հրային լեզուներով

սկսեցին մինչև ծնկները լափել նրա ոտքերը...  
և յանկարծ լսեցի...

Զինուորն այժմ նստած էր ուղիղ, ձգուած  
ձեռքերով...

— Յանկարծ լսեցի տրաքող ապակու նման  
մի ձայն... մի մեղմ զօղանշին... բարձրա-  
ցնելով աշքերս նկատեցի, որ նրա գլուխը խո-  
նարհած է... նրա աշքերը փակուած էին... նրա  
մարմինը ցաւից կծկում էր սինի վրայ...  
նրա ճակատից հոսում էր սառն քրախնք...  
տեսնելով նրա տանջանքները այլ եռ չկարո-  
ղացայ դիմանալ... իսկոյն ցատկեցի կրակուած  
ցախերի մէջ, սկսեցի ոտքերով կոխոտել ու  
հանդցնել մինչև վերջին կայծը և ձեռքերով  
գէն շպրտել նրան շրջապատող փշենին: Նա  
նորից բացեց աշքերն ու ասաց.

— Ի՞նչ ես անում, եղբայր, ինչի չես թոյլ  
տալիս որ մեռնեմ ի գնամ նրա մօտ, Որն ինձ  
սպասում է այստեղ:

Փենին այլ ևս չէր խանգարում... եռ զըր-  
կեցի նրան և նա խոնարհեցրեց իւր գլուխը  
կրծքիս վրայ: Ահա այստեղ... այստեղ...

Եւ զինուորը ձախ ձեռքով ցոյց տուեց  
իւր կրծքի վրայ այստեղը...

— Ահա այստեղ էր դրուած նրա գլուխը...  
այն, հէնց այստեղ...

— Միամիտ կաց, ասացի ես, գու նոյն-  
պէս կրմեռնես, ես տեսնում եմ, որ այդ բա-  
նից անկարելի է փախչել, բայց գու կըմեռնես  
ոչ թէ կրակով, սարսափելի տանջանքների մէջ,  
այլ իմ ձեռքով: Մեզանում, մեր երկրում այր  
մարդու ձեռքով սուսերամահ լինելը պատուա-  
ւոր մահ է համարւում: Եւ գու մի սրանչելի  
արարած ես, գու էլ այդպէս կըմեռնես... Ես  
ըեղ սիրում եմ... այն, սիրում եմ այն սիրով,  
որով աշխարհիս երեսին չեմ սիրել ոչ ոքի և  
երբէք էլ չեմ սիրելու... Որովհետեւ գու սիրում  
ես Յիսուսին, ես էլ կըսիրեմ նրան և քեզ նը-  
ման ըրիստոնեայ կըլինեմ, որպէս զի քեզ հետ  
այս այգում լինեմ...

Նոյն միջացին ձախ ձեռքով գուրս քաշեցի  
պատեանից կողքիցս քարշ արած սուսերս և  
այն ժամանակ, երբ նրա գլուխն ընկած էր  
ուսիս վրայ և նրա գէմքը ուղղուած էր գէմ-  
քիս... ես համբուրեցի նրա շրթունքները.....

Եւ զինուորը յանկարծ վեր թռաւ տեղից,  
շտկուեց իւր ամբողջ հասակով... Նա ընկաւ  
մի ինչ որ զրութեան մէջ, նրա աշքերը մի ա-  
ռանձին հրճուանրով սկսեցին հեռուն նայել...  
դէպի մի հեռաւոր աշխարհ, որի մասին պատ-  
մել էր Կլաւդիան...

— Այն, շարունակեց նա, — ես համբուրեցի

Նրա շրթունքները և ասացի. «Մնաս բարեհաւ,  
Կլաւդիա... ցտեսութիւն... Իհձ կսպասէս այն-  
տեղ».

— Նա նայեց ինձ... նայեց իւր աչքերով...  
այն, իւր սրանչելի աչքերով ու շնչաց...

— Կլաւդիան կըսպասէ քեզ...

— Այնունետե ևս մօտեցրի սուսերիս ծայրը  
Նրա սրտին և որովհետեւ նա մերկ էր, սուսերս  
առանց որևէ արգելրի թափանցեց նրա սիր-  
տը... Նա մի անգամ էլ գողաց ձեռքերիս  
մէջ... ցնցուեց... յետոյ մի հոգոց հանեց. •  
և... և ամեն բան վերջացաւ...

Ասելով այս, զինուորը յանկարծ գետին  
տապալուեց ինչպէս մի կտրուած ծառ. Նրա  
ձեռքերն ընկած էին աթոռի վրայ, իսկ զը-  
լուխը ձեռքերի մէջ... Այդ գրութեան մէջ նա  
չկարողացաւ նշմարել ծերունի ամուսինների  
լուռ նշանները և հարեան սենեակ մտնելի ու  
զուր բերելլ. Նա աչքերը բացեց միայն այն  
ժամանակ, երբ իւր գլուխ վրայ զգաց մի ինչ  
որ սառնութիւն:

Նրա մօտ կանգնած էր Ակվիլան. Նա թա-  
թախեց ձեռքը օրհնուած ջրի մէջ և քսեց խա-  
չանման նրա գլուխ ու ճակատի վրայ. Միենոյն  
ժամանակ նա մի ինչ որ բան էր մրմնջում,  
նման այն աղօթքի, որ կարգացւում էր նոր

բրիստոնէի համայնքի մէջ ընդունելու ժամա-  
նակ. Զինուորը լռութեամբ լնդունում էր այդ  
ամենը:

Երեքն էլ այնպէս խորասուզուած էին, որ  
շրկարողացան լսել գրսի բայլերի և խօսակցու-  
թեան ձայները. Միայն այն ժամանակ, երբ  
դուռը դրսի հարուածների աղգեցութիւնից  
խորասակուեցաւ՝ գոլացին:

Դռան չէմքում կանգնած էին հոռվմայեցի  
երեր զինուոր:

Զարմանալի թուաց այդ տեսարանը, թէ  
մի որեէ սոսկալի բան նկատեցին դեռ ևս չո-  
գած հոկայի աչքերի մէջ... յայտնի չէ... Բայց  
նրանք մեխուած մնացին իրենց տեղում զար-  
մացած նայելով իրար երեսի:

Վերջապէս զինուորներից մինը մի քայլ  
առաջ անցաւ:

— Գնու ես քրիստոնեայ Ակվիլան:

— Այն, ասաց ծերունին խոնարհեցնելով  
գլուխը:

— Իսկ այդ կի՞նը... բո կի՞նն է... նոյն-  
պէս քրիստոնեայ:

Ծերունին դարձաւ գէպի Պրիսցիլան, կար-  
ծես կամենալով նրան խօսեցնել:

— Այն, քրիստոնեայ եմ, ասաց Պրիսցիլ-  
ան հաղիւ լսելի ձայնով:

— Ուրեմն, պատրաստուեցէք... Դէս...  
հետևեցէք մեզ, — ասաց զինուորը:

Եյդ բողէին շիկահեր հոկան բարձրացաւ  
տեղից... Նա թէի բարձրացաւ գանդաղ, բայց  
նրա շարժուածքի մէջ կար մի ինչ որ խստու-  
թիւն:

— Հանգիստ թնդ ծերունուն և իւր կնոջը,  
ասաց հոկան: Մրանը ոչ մի վատութիւն չեն  
արել... Եւ դուք, որ պատմում էք թէ բրիս-  
տոնեաները հրդեհել են չոռվմը, այդ սուտ է...  
ինքներդ էք հնարիլ:

Նա այդ խօսքեց արտասանեց մի այն-  
պիսի ձայնով, որպիսին հանում է այն շլթա-  
յած շունը, որը կամենում է նախազգուշացնել  
անկոչ հիւրին, որ զգուշանայ:

Չոռվմայեցի զինուորը աչքի տակով նա-  
յեց հոկային և բարւոք համարեց ուշադրութիւն  
շրդարձնել:

— Դէս, յառաջ, ասաց նա մեկնելով իւր  
ձեռքը և կամենալով բռնել Ակվիլայի ուսից...  
Բայց նոյն բողէին մի այնպիսի ուժով յետ  
մղուեցաւ դէսի պատը, որ թէ այտերը ճեր-  
մակացան պատի ներկից և թէ զրահը ճրճռաց...

Շիկահեր հոկան կանգնած էք նրա առաջ  
իւր ամբողջ վիթխարի հասակով:

— Միթէ չըլսեցիր, որ ասացի քեզ թէ  
մի դիմիչիր ծերունուն:

Հռովմայեցի զինուորը դուրս գալով համ-  
բերութիւնից, յարձակուեցաւ նրա վրայ, բրո-  
նեց հոկային և նրանց մէջ տեղի ունեցաւ  
կեանքի և մահու կոիւ:

Բայց կոփուը միայն մի քանի վայրկեան  
տեսեց: Յանկարծ լսուեցաւ մի սարսափելի հա-  
րուած, նման մոտպործի այն հարուածին, որով  
ջարդում է միտն ու ոսկորը և հռովմայեցի զին-  
որը հոկայի ահոելի բռունցրից՝ անզգայ գե-  
տին փոռուեցաւ:

Մնացեալ երկու հռովմայեցի զինուորները,  
որոնք մինչև այդ ժամանակ արձանացած կանգ-  
նած էին՝ սթափուեցին: Նրանք հայհոյանքով  
վրայ թափուեցան հոկային:

— Նուն... ինչպէս համարձակուեցիր մի-  
ջամտել մեր գործին... ինչպէս, քրիստոնեա-  
ներին ես պաշտպանում... ասելով այս, նրանք  
մերկացրին սրերը:

Հոկան տեսնելով վայրուն պողպատը, ա-  
րեան ծարաւ արթնացաւ նրա մէջ... Նա մի  
քայլ յետ ցատկեց, դուրս բաշեց պատեանից  
սուսերը և շարժելով նրանց զլսին՝ բացա-  
կանշեց.

— Christianis sum.— Մի այնպիսի ձայ-

նով, որ փողոցումն անգամ լսուեցաւ... Նա ընդունեց այդ ինչպէս մի պատերազմական կոչ... Նրա աշքերը լցուեցան արիւնով... Նրա տեսքը մի ակնթարթում կատաղի արտայայտութիւն ստացաւ...

— Վրէժ Կլաւդիայի համար... մահ մարդառաններին...

Այս խօսքերին հետեց մի հառաջանք. երկրորդ զինուորը արգէն կծկում էր գետնի վրայ... Հսկայի սուսերը դիպել էր նրա պարանոցի և ուսազլսի արանքը և զրեթէ կտրել էր նրա ամբողջ թեր...

Բայց այդ ժամանակ, երբ հսկան տուեց այդ հարուածը, զինուորներից երրորդը կողքից յարձակուեց նրա վրայ և այնտեղ, որտեղ զրահը մի փոքր բարձրացրել էր, սուրը մինչև կոթը կոխեց նրա կողը... Մի աքացի միայն, որով հսկան գէն շպրտեց հոռվմայեցի զինուորին մինչեւ դրան շէմքը, եղաւ այդ գաւաճան յարձակման միակ պատասխանը: Հսկան հպարտութեամբ փուուեցաւ յատակի վրայ... իսկ զինուորը սարսափից խելքը կորցնելով տնից դուրս վախսաւ:

Մեռնողի շիկահեր գլուխը ընկած էր Ակվիլայի ծնկների վրայ... Նրա աշքերը վախսած էին և մինչդեռ արիւնը հոսում էր նրա կողից,

նրա գէմքը հետզհետէ փոխուում էր, նրա արիւնածարաւ արտայայտութիւնը մի գեղեցիկ, շնորհալի և զրեթէ մանկական արտայայտութեան փոխուեց...

Պրիսցիլան ծնկաշօք կանգնած էր նրա մօտ և բռնել էր նրա փոքր առ փոքր թուլացող և սառչող ձեռքերը...

— Լսում եմ մի շնչիւն.. Լսում եմ մի... շնչիւն... թոթովկեց հսկան աշքերը բանալով: Ծերունիները ոչ մի խօսք չասացին... Մի շերմեռանդ երկիւղածութիւն չէր թոյլ տալիս նրանց խանգարել այն վերև պատկերները, ուրոնք երեսում էին հսկայի դէպի վեր սլացող հոգուն...

— Թեհեր... աւելացրեց հսկան, — ճերմակ թեհեր... ուսերի վրայ... մեծ... թեհեր.

Նկատելի էր, որ նա վեր կենալու համար ոյժ էր գործ գնում և կարծես կամենում էր ընդառաջել մինին... որ գալիս էր նրա մօտ... Բայց նա ուժասպառ եղաւ... նա շըկարողացաւ բարձրացնել գլուխը... Նրա ձեռքերը շափազանց թոյլ էին իւր առաջ դուրս եկողին մեկնելու և գրկելու համար... Նրա անկենդան շըրթուները վերջին անգամ միայն մի թանկացին...

Կլաւդիա....

Եւ հսկայի ահաղին մարմինը ձգուեցաւ  
իւր ամբողջ վիթխարի հասակով... Նա տա-  
րածուած էր յատակի վրայ խաղաղ ու հան-  
գիստ... Նրա սառչող դէմքի վրայ խաղում էր  
երջանիկ, խորհրդաւոր... անբացատրելի մի ժը-  
պիտ....

Ճատ կարելի է Կլաւդիան կատարեց իւր  
խօսքը... Կարելի է նա գուրս եկաւ նրա առաջ  
ու նրանիք արդէն ձեռք ձեռքի տուած թափա-  
ռում են այն հրաշալի ու սքանչելի այգում,  
ուր չկայ ոչ ամարային տապ ու տօթ և ոչ  
ձմերային սառնամանիք...:



ԳԵՐԶ

Ա.Ա.ՃԱՌԻՈՒՄ ԵՆ

Կենարոնական գրավաճառանոցում  
Մեր հետեւեալ աշխատութիւնները

- 1) ՔԱՆԴԱՄԾ ՕԶԱԽ. Անցեալից մի Ժիշողու-  
թիւն, 1889. գին է 20 կոպ.
- 2) ՅԻՄՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՒՈՐ ԿԵՎԵՐԸ ԵՒ  
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (սակաւաթիւ), 1898  
գին է 1 բուբլի.
- 3) ԿԱՄԻԴԻԱՅԻ ԱՅԳՈՒՄ. Էրնստ Փոն Վիլդէն-  
բրունի. 1898 գին է 20 կոպէկ:

Մեզ դիմողները ճանապարհածախս չեն վճա-  
րում:

Հասդի՛ Շեմախա. Սվայեննիկո Տաշատу  
Մարգարիտ.

1546

2013

